

ԶԱԲԱՐԻԱ ԱՂԱՄ (1611-1688)

Մերուժան Կարապետեան

Մեծ բարեկամիս՝ Հայր Սահակ Ծեմճեմեանի լուսատր ու անմոռաց յիշատակին

Ժէ. դարի հայ մատենագրութիւնից յայտնի է 1683 թ. փետրուարի 2-ին, Վերսալում Լուդովիկոս ԺԴ.-ի մօտ հայոց հոգեւոր ու աշխարհիկ աւագանու հետ կայացած մի հանդիպման մասին¹: Շահմուրատ Բաղիշեցին անուանապէս թուարկում է այդ օրը Վերսալում հաւաքուած անձանց. «Ի թիւն Հայոց ՌՃԼԲ [1132=1683 թ.], փետրվար ամսոյ Բ [2] աւուրն, ես Բաղիշեցի Մահտեսի Շահմուրատս գնացի ի թագաւորանիստ քաղաքն Վէրսալիայ, տեսայ զթութունչի Յովանէս վարդապետն, Սիսիանցի Զաքարիա վարդապետն, Հալապցի Ղազարոսի որդի Զուգէփն, Արզրումցի Յովանէսի որդի Գրիգորն, Ղազանչեցի Մուրատն, Ոսկան վարդապետի քվեր որդի Սողոմոնն...»²:

Եթէ հայագէտները կողմից բազմիցս անդրադարձ է եղել եւ քիչ թէ շատ ուսումնասիրուել են ցուցակի առաջին երկու անձանց կենսագրութիւնը, ապա երրորդ անձի մասին մենագրական հետազոտութիւն ցարդ չունենք: Աչոտ Յովհաննիսեանը Սիսիանցի Զաքարիային նոյնացնում է Տաթեւի վանքի վանահայր Յովհաննէս Շապանօղլու եղբորորդի Զաքարիա վարդապետի հետ եւ նոյնիսկ աւելի հեռուն գնալով եզրակացնում, թէ Զաքարիան Եւրոպա ժա-

մանելով նպատակ ունէր ստանալու Քրանսիական կառավարութեան միջնորդութիւնը Իրանի առջեւ՝ յետ ստանալու Տաթեւի վանքի յափշտակուած կալուածքները, եւ տարակուսում, թէ ինչու է Իսրայէլ Օրին լուում վերջինիս մասին³:

Այս նոյնականացումն, անկասկած, լիովին հիմնադուրկ է:

Յ. Անասեանը մանրակրկիտ քննելով Վերսալի հանդիպման մասնակիցների ցուցակը, գալիս է ճիշտ եզրակացութեան՝ քննութեան ենթակայ անձին նոյնացնելով Զաքարիա Աղամի հետ, որ Պոլսից 1643 թ. թէպէտիսեան միսիոներ եւ հայագէտ Կղեմէս Գալանոսի կողմից Հռոմ տարուած երեք հայ պատանիներից մեկն էր: Յ. Անասեանը սխալում է միայն, երբ Զաքարիա Աղամի ծննդավայրը համարում է «Սիսիան գաւառը, գուցէ եւ համանուն գիւղը (այժմեան Հացաւանը)»⁴: Զաքարիա Աղամի անձին ու գործունէութեանը, հայ գրատպութեան հետ կապուած խնդիրները քննելիս, մասնակի անդրադարձներ են ունեցել Կարապետ եպս. Ամատունին⁵ եւ Հ. Սահակ Ճեմճեմեանը⁶:

1 Այս հանդիպման վերաբերեալ բոլոր տեղեկութիւնների համար պարտական ենք հանդիպման մասնակիցներից մեկին՝ Ծահմուրատ Բաղիշեցուն, որի անունով մեզ աւանդուած յիշատակարանի գիտական հրատարակութիւնը տե՛ս Յակոբ Անասեան, XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում. Պատմական հետազոտութիւն, Երեւան, 1961, էջ 315-319:

2 Տե՛ս Յակոբ Անասեան, նշ. աշխ., էջ 315:

3 Տե՛ս Ա. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք երկրորդ, Երեւան, 1959, էջ 323, ծանօթ. 1:

4 Տե՛ս Յակոբ Անասեան, նշ. աշխ., էջ 178 եւ հտ.:

5 Տե՛ս Կարապետ եպս. Ամատունի, Ոսկան Վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը. Լուսատր էջ մը ԺԷ. դարու հայ եկեղեցական պատմութեան, Վեներիկ-Ս. Ղազար, 1975 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», թիւ 9):

6 Հ. Սահակ Ծեմճեմեան, Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ԺԷ. դար), Վեներիկ-Ս. Ղազար, 1989 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», թիւ

Ստորեւ կը փորձենք Հաւատասփիւռի ժողովի ղեւանի փաստաթղթերով եւ համաժամանակեայ այլ աղբիւրներով ուրուագծել վերսայեան հանդիպման հայագրի մասնակիցների ցուցակի երրորդ համարի՝ «Սիսիանցի Զաքարիա վարդապետ»-ի կամ Զաքարիա Աղամի կենսագրական ու մատենագրական ղրուագները⁷:

Ուսանողութեան շրջանը

Զաքարիա որդի Աղամի, Սիսիան գաւառի Բնունիս գիւղից, ծնունել է, դատելով տապանագրից՝ 1611 թ.: Աղամ անունը, թուրքերէն «իմ աղան» ձեւից, հայոց մէջ յիշատակուած է 16-րդ դարից, որտեղից էլ Աղամեան ազգանունը⁸: Եթէր տարի աշակերտել էր դոմինիկեան կրօնաւոր Պօղոս Փիրոմալլիին⁹, որի հետ Երեւանից 1637 թ.

փախել էր Կ. Պոլիս¹⁰ եւ ապա՝ Լէոպոլիս¹¹: 1642 թ. սեպտեմբերի 25-ին Փիրոմալլին գրում է, թէ Լէոպոլսում նրան նշանակել է քաղաքի հայագրի մանուկների ուսուցիչ, քանի որ քաջատեղեակ էր կաթողիկէ վարդապետութեանը¹²:

Ապա Զաքարիան Լէոպոլսից անցել է Հոռո՝ կատարելագործելու իր աստուածաբանական կրթութիւնը: Ուրբանեան վարժարանի աշակերտների ցանկի համաձայն, նա վարժարան էր մտել 1643 թ. սեպտեմ-

29): Վերջինս գործածելով Հաւատասփիւռ ժողովի դիւանի լատիներէն եւ իտալերէն փաստաթղթերը, ուր Զաքարիայի հայրանունը նշուած է Agham, Agam կամ Acam ձեւով, գրում է Ակամ, որն, անկասկած, սխալ է:

7 Նախկինում, անդրադառնալով Հոռոմի հայոց պատմութեանն ու ս. Մարիամ եգիպտացի հայոց եկեղեցու տապանաքարերին, հրատարակել էինք Զաքարիայի տապանագիրը (վրիպակներով) ու նրա կենսագրական մանրամասնութիւնների մասին վկայող մի շարք կարեւոր դիւանական փաստաթղթերի թղթածրարներ, որ հիմա կը փորձենք քննել ստորեւ (տե՛ս Կարապետեան Մ. Մ., Հոռոմի հայ գաղթօջախի պատմութիւնից.- «Պատմա-բանասիրական հանդէս», 1998, թիւ 2, էջ 176-178):

8 Տե՛ս Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բանարան, հտ. Ա, Երեւան, 1942, էջ 96:

9 Պօղոս Փիրոմալլիին, 1648 թ. մարտի 18-ին, Սպահանից, Հաւատասփիւռ ժողովի կարդիւնալների գրելիս, նամակի վերջում ողջուններ է ողարկում Հոռոմում գտնուող «իրեն եօթը տարի աշակերտած Բալասանին եւ Զաքարիային» (իտալ. «discepoli mici sette anni» - տե՛ս Archivio della S. Congregazione de Propaganda Fide (այսուհետեւ՝ AP), Scritture Originali riferite nelle Congregazioni Generali (այսուհետեւ՝ SOCG), vol. 292, f. 352+359): Պօղոս Փիրոմալլիին պատանի Զաքարիային, որի հետ 1637-ին պիտի լքէր Հայաստանը, կարող էր ծանօթացած լինել 1632 թ. մայիս ամսից ոչ վաղ, քանի որ ինքն իր նամակայրը՝ Նախիջեւան, հասաւ այդ ժամանակ (Փիրոմալ-

լիի՝ Նախիջեւան հասնելու եւ Ծահուկի նորընծաների դպրոց մեկնելու մասին տե՛ս Նախիջեւանի հայ կաթողիկէ արքեպիսկոպոս Աւգուստին Բաշենցի 1632 թ. ապրիլի 22-ի նամակը Հաւատասփիւռի ժողովի քարտուղար Ֆրանչեսկո Ինկուլիին Ապարաներից (SOCG, vol. 103, f. 260r):

10 Փիրոմալլին, իր եւ իրեն ուղեկցող աշակերտների, որոնց թում նաեւ Ոսկան Երեւանցու եւ Զաքարիայի փախուստի մասին, մանրամասն պատմում է Ինկուկենտիոս Ժ. պապին ուղղած իր 1654 թ. մի երկար գրութեամբ: Հաւատասփիւռի դիւանում գտնուում է այս նամակի ինչպէս բնագիրը (SC, vol. 293, ff. 24-31), այնպէս էլ առաւել մաքուր ընդօրինակութիւնը (SC Armeni, vol. I, ff. 66-92): Այս վերջին հարազատ ընդօրինակութեան հայերէն մասնակի թարգմանութիւնը եւ ամփոփումները տե՛ս Մեսրոպ վրդ. Թերզեան, Վաւերաթողութեւր. Դոմինիկեան կրօնատր սը Էջմիածնի մէջ, - «Աւետիք», 1947, թիւ 3-4, էջ 46-48, թիւ 5-6, էջ 98-100: Նոյնի, Բիրոմալլի Էջմիածնէն վտարանդի,- «Աւետիք», 1947, թիւ 7-8, էջ 137-140: Հմմտ. Կարապետ եպս. Ամատունի, Ոսկան վրդ. Երեւանցի..., էջ 57-66: Համաձայն Փիրոմալլու այս տեղեկագրի, իրենց փախուստի երթուղին հետեւեալն է եղել՝ Երեւան - Երեւանից ութ օրուայ հեռաւորութեան վրայ գտնուող Գանձակի եկեղեցին (Convento di Cangia, otto giorni contada Erivan - 75v) - Գառնակեր գիւղ (villa chiamata Carnaghiera -79r) - Բարսում գիւղ (villa chiamata Parsumazzie (Բարսումաշէ՞ն)-79r) - Ղարամուրադի եկեղեցին (Convento di Caramurata - 84r), ապա Վրաստան, որտեղից էլ անցնում են Կ. Պոլիս: Ծամխորի շրջանի այս գիւղախմբի եկեղեցիների պատմութեան ու նրանց վիմագրական ժառանգութեան տե՛ս Կարապետեան Ս., Հիւսիսային Արցախ, Երեւան, 2004, էջ 88-98, 467-485:

11 Տե՛ս Կարապետ եպս. Ամատունի, Ոսկան վրդ. Երեւանցի ..., էջ 75-80:

12 Տե՛ս SOCG, vol. 61, f. 86rv:

բեր 27-ին: Նոյն ժամանակ Կ.Պոլսից Հոռոմ էր վերադարձել Կղեմէս Գալանոսը, իր հետ բերելով 3-4 աշակերտներ¹³, որոնք տեղաւորուում են Ուրբանեան վարժարանում, ուր Կղեմէս Գալանոսը հայերէնով դասաւանդում էր փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն: Զաքարիան եւս այս խմբում էր:¹⁴ Ուրբանեան վարժարանի

աշակերտները, յատկապէս Արեւելքից եկածները, որոշ ժամանակից յետոյ կաթողիկէ դաւանութիւն էին տալիս: Զաքարիայի մասին բացայայտ կերպով յիշատակուում է, թէ երգումը չի տուել, հաւանաբար Փիրոմալլիին աշակերտելիս վերջինիս երգուած լինելու պատճառով:

Աշակերտութեան տարիներին, քանի որ ծանօթ էր թուրքերէն լեզուին, Հաւա-

13 Եթէ Կ.Պոլսից Հոռոմ Գալանոսի բերած պատուհաններից իր յիշատակած «Zacharias clericus»-ը նոյն Զաքարիա Սիսիանցին է, որ ամենայն հավանականութեամբ այդպէս է (տե՛ս **Clementis Galani, Historia Armena, ecclesiastica & politica...**, Coloniae, 1686, p. 244), ապա մշեմք որ մենք տեղեկութիւններ չունենք նրա Լէոպոլսից կրկին Կ.Պոլիս ետդարձի մասին:

14 Գալանոսի մատավայրը Հոռոմում գտնուում էր S. Andrea della valle-ում, այսինքն թէպէտեանների մայրավանքում: Այն բոլոր հայ աշակերտները, որոնք դէպքերի բերումով գալիս էին Հոռոմ, Հաւատասփիտի ժողովի հրամանով յաճախում էին ուսանելու Գալանոսին: Այս աշակերտների թիւը շատ համեստ էր 1640-ականներին, այն է՝ հազիւ 4 հոգի: Գալանոսի աշակերտները՝ մեր ունեցած աղբիւրների համաձայն հետեւեալներն են. 1. *Յովհաննէս Աբդալ*, որ աշակերտել է Գալանոսին՝ Պոլսից սկսեալ, այն է 1642ից, ապա Ուրբանեան վարժարանում՝ 1643-1645 թթ. եւ յաջորդաբար՝ աստուածաբանութեան համար՝ 1647-1650 թթ.: 2. *Կարապետ Վրդ. Երեւանցի*, Կ.Պոլսի Կիրակոս պատրիարքի եղբայրը, որ Գալանոսի հետ 1643-ի ամռանն էր եկել Պոլսից: Յաճախում էր Գալանոսի մօտ՝ 1647-1651 թթ., կատարելագործելու համար աստուածաբանական կրթութիւնը: 3. *Բալասան (Պաղտասար)*, Սպահանից, նախ յաճախում էր Ուրբանեան վարժարան, եւ ապա 1646-1648 թթ. Գալանոսի մօտ սովորում էր աստուածաբանութիւն, որի ամբողջ դասընթացը այդպէս էլ չաւարտեց: 4. *Գրիգոր Ծործորեցի* (Նախիջեւանի դոմինիկեան միաբան), 1647-1649 թթ. Օգոստինոս Բաջենցի խնդրանքով, յաճախում էր Գալանոսին, հայերէնով աստուածաբանութիւն ուսանելու: 5. *Թոմաս Վրդ. Բերիացի* (Կ.Պոլսի պատրիարք), 1648-ին Հոռոմից անցնելիս՝ խնդրանք է ներկայացնում Հաւատասփիտի ժողովին վեց ամիս աշակերտելու Գալանոսին: Նոյն խնդրանքը Թոմաս վարդապետը ներկայացնում է նաեւ իրեն ընկերացող սարկաւազի համար: 6. *Զաքարիա Աղամ*. յիշում է, որ Յովհաննէս Աբդալից առաջ աշակերտել էր Գալանոսին կամ Ուրբանեան վարժարանում 1643-1645 թուականներին եւ կամ անմիջապէս յետոյ՝ 1645-1646 թթ.: Այս համաձայն գանկից երեւում է, որ Գալանոսի դասաւան-

դութեան շրջանը տեսել է 1646-1649 թթ., մըշտապէս Հաւատասփիտի ժողովին հսկողութեան տակ:

Գալանոսի գործունէութիւնը եւ աշխատելակերպը անցանկալի էր յատկապէս Նախիջեւանի Օգոստինոս արքեպիսկոպոս Բաջենցի համար: Վերջինս ակնյայտօրէն խանդով էր վերաբերում Նախիջեւանի փոխարէն Հոռոմում հայկական վարժարան բացելու որեւէ գործընթացի, հասկանալով որ դրանով Հաւատասփիտի ժողովը վերջնականապէս փակում է Նախիջեւանում հայկական վարժարան հիմնելու նախորդ տասնամեակների բոլոր քննարկումները (Նախիջեւանում հայկական վարժարան հիմնելու ամբողջ անցողարձը տե՛ս Հ. Սահակ Ծեմճեմեան, *Նախիջեւանի Հայոց վարժարանը եւ Հոռոմը*, Վեներտիկ-Ս.Ղազար, 2000): 10 սեպտեմբեր 1650-ին գրեթէ բողոքի ձեւով նա գրում է Հաւատասփիտի ժողովի քարտուղարին հետեւեալ տողերը. «Մի տարի առաջ գրեցի ձեզ, որպէսզի Չիտտաղիի [արքեպիսկոպոսի] (վերջինիս մասին մանրամասն տե՛ս **Carlos Alonso, Angel Maria Cittadini, Arzobispo de Naxiwan (m. 1629): una iniciativa de Propaganda Fide en favor de Armenia**, Roma (Studium Theologicum Augustinianum, 1970)) թողած գումարից մի մաս շնորհէք մեզ: Խնդրում եմ նաեւ, որ նոյն գումարը չգործածուի այլ վայրերում դպրոց բացելու վրայ՝ քանի որ այդ դրամը սահմանուած այստեղի (իմա՝ Նախիջեւանի - Ս. Կ.) դպրոցի՝ համար է եւ ոչ ուրիշ տեղի, ուր յաճախում են հերձուածողներ, սովորում են եւ ապա սուրը մեր ձեռքից առնելով՝ կտում են մեր դէմ, ինչպէս վարուեցին Հ. Պօղոս Պիրոմալլիի մի շարք աշակերտները, որոնք մեր մեծագոյն թշնամիներն ու հալածողներն են: Թէպէտեանները ձեզ համոզեցին, որ Հոռոմի մէջ վարժարան բացէք, ուր Կղեմէս Գալանոսը դասուց տեսուչ (Rettore), որպէսզի փայլի եւ տարածուի իրենց միաբանութիւնը» (տե՛ս SOCG, v. 292, f. 296-297): Անկասկած խիստ էր Բաջենցի մեղադրանքը, որովհետեւ Գալանոսի գործունէութիւնը հեռու էր դասական «վարժարան» լինելուց, հակառակ որ այդպիսի ծրագրերով էր եկել Պոլսից 1643 թ.-ին:

տասփիլոսի ժողովի քարտուղար Ինկոլին 1645 թ. ապրիլի 21-ին, գրելով Հալատասփիլոսի ժողովի աշխատակից Հ. Մարկոյին, ցանկանում է, որ նոյն օրը ժամը 21-ին Ջաքարիան ներկայ գտնուի մի հալաքոյթի, ուր պիտի քննուէր Հ. Domenico Germano-ի կողմից կատարուած հալատոյ դասնութեան թուրքերէն թարգմանութիւնը:¹⁵

Երկու տարի Ուրբանեան վարժարանում աստուածաբանական կրթութիւնն աւարտելով, Ջաքարիան խնդրագիր է ներկայացնում Հալատասփիլոսի ժողովին, որ սկսուած է հետեւեալ կերպ. «Zaccharia armeno, figlio di Agam dal Erevan, alunno del Collegio di Propaganda Fide, Lavendo finito e suoi stidi di theologia in lingua armena...»: Խնդրագրով Ջաքարիան հրաման է խնդրում հայրենիք վերադառնալու, հայոց մէջ սովորածը քարոզելու համար: Միաժամանակ խնդրում է միսիոներական լիազօրութիւններ եւ թոշակ՝ այս առաքելութեանը նուիրուելու համար:¹⁶ Ջաքարիան իր այս խնդրագիրը յաջորդաբար կրկնել է¹⁷, որ Հալատասփիլոսի ժողովի քարտուղարութեան կողմից համառօտուած է որոշ ծանօթութիւններով, թէ Ջաքարիան հրաման է խնդրում քահանայ ձեռնադրուելու ու միսիոներ դառնալու Մեծ Հայքում (Armenia Maggiore), դրա համար խնդրում է մի քանի տարուայ թոշակ՝ մինչեւ հայ կաթողիկէ ժողովրդի կողմից ապահովուի իր ապրուստը:

Հալատասփիլոսի ժողովի վճիռը Ջաքարիայի Ակատմամբ, վերջինիս ձեռնադրութիւնը եւ առաքելութիւնը (1646-1652):

Հալատասփիլոսի ժողովը Ջաքարիայի մասին սկզբնական ծանօթութիւններ հաւաքելու նպատակով նախ հարցնում է

Ուրբանեան վարժարանի տեսուչ Հ. Մարկոյի տեսակէտը¹⁸, ապա 1645 թ. սեպտեմբեր 19-ի նիստով վճռում է նրան տալ հայ կաթողիկէ եպիսկոպոսի կողմից քահանայ ձեռնադրուելու իրաւունք, լիազօրութիւն տալով վերադառնալու որպէս Մեծ Հայքի միսիոներ, տարեկան 50 սկոլդ թոշակով, նախատեսուած երեք տարուայ համար: Նոյն նիստում որոշուած է նաեւ Ջաքարիային տալ 60 սկոլդ՝ զգեստի ու ճանապարհածախսի համար:¹⁹

Ջաքարիան 1645 թ. հոկտեմբերի 12-ին թողնում է Ուրբանեան վարժարանը: Նրա տեղը գրաւում է Բալասան անունով մի այլ հայ պատանի²⁰, որը եւս աշակերտել էր Փիրոմալլիին եւ սպասում էր Ջաքարիայի մեկնելուն՝ վարժարանում վերջինիս տեղը գրաւելու համար:

Ջաքարիան մինչեւ 1646 թ. յունիսի 15-ը գտնուած էր Հռոմում, ուր հայածէս ձեռնադրիչ եպիսկոպոս չգտնելով, նոր խնդրագիր է ներկայացնում Լեհաստան գնալու, քահանայական ձեռնադրութիւնը Նիկոլ Թորոսովիչից ստանալու համար:²¹ Նոյն թուականին գումարուած Հալատասփիլոսի ժողովը հարցը թողնում է պապի կամքին. եւ պապը թոյլատրում է, որ ձեռնադրութիւնը կատարուի Նիկոլ արքեպիսկոպոսի կողմից, առանց պահելու սարկաւազութեան եւ քահանայութեան համար պահանջուած կամ նախատեսուած միջանկեալ ժամանակամիջոցը:²²

Հալատասփիլոսի ժողովի 1647 թ. յուլիս 15-ի նիստին զեկուցուած է Լեհաստանի նուիրակի նամակը, ուր տեղեկացուած է, որ Ջաքարիան Նիկոլ արքեպիսկոպոսից ըն-

15 Տե՛ս AP, Scritture riferite nei Congressi (այսուհետ՝ SC), Serie II, Collegio Urbano, vol. 1, f. 280

16 Տե՛ս SOCG, vol. 409, f. 168rv:

17 Տե՛ս SOCG, vol. 409, f. 204rv:

18 Տե՛ս SOCG, vol. 414, f. 140rv:

19 Տե՛ս AP, Acta Sacrae Congregationis de Propaganda Fide (այսուհետ՝ Acta), vol. 16, f. 427, n. 3:

20 Բալասանին անդրադասուելու ենք առանձին յօդուածով:

21 Տե՛ս SOCG, vol. 411, f. 212rv, 282rv:

22 Տե՛ս Acta, vol. 17, f. 122, n. 28:

դուռնել է քահանայական ձեռնադրութիւնը, ուստի Հաւատասփիւռ ժողովը հաստատում է իր նախկին խոստումը, որով Չաքարիան ընդունում է իբրեւ Ս. Ժողովի միախոնք, սահմանելով նրան 50 սկուղ տարեկան թոշակ, երեք տարուայ համար:²³

Չաքարիան իր 1647 թ. օգոստոս 28 թուակիր նամակով Լէոպոլսից, նախ տեղեկացնելով Նիկոլ արքեպիսկոպոսից ձեռնադրուած լինելու մասին, եւ Ս. Աթոռին «բազմիցս գրելը», միախոնքական իշխանութեան թոյլտուութիւն ստանալու համար առաքելութեամբ Հայաստան մեկնելու մասին: Չաքարիան նկարագրում է Նիկոլի հետ ունեցած իր անհաշտ կեանքը, թէ իրեն խաբելով մինչեւ հիմա ծառայեցնում էր, ստելով իբր թէ իր մասին գրել է Հաւատասփիւռ ժողովին եւ պատասխանի է սպասում. իր այսպիսի վարուելակերպի պատճառով մօտից փախել են բոլոր կրօնաւորները: Հիմա Չաքարիան կայսրից ունեցած յանձնարարական գրով ներկայացել է Լեհաստանի Վլադիսլաւ (Ladislaw) IV թագաւորին, որից յաջողել է ստանալ յանձնարարական նամակ՝ ուղղուած Պարսից շահին եւ Էջմիածնի կաթողիկոսին: Ներկայումս սպասում է Հաւատասփիւռ ժողովի ուղարկելիք նամակին եւ այլ յանձնարարական նամակների՝ ուղեւորուելու դէպի իր առաքելավայրը՝ Մեծ Հայք: Իր այս՝ 1647 թ. օգոստոսի 28-ի նամակում Չաքարիան ստորագրում է «P. Zacharia Agam Ord. S. Antonii Abatis», այսինքն՝ «Ս. Անտոն արքայի կարգից»:²⁴

1648 թ. փետրուար 9-ին Չաքարիան դարձեալ գրում է Հաւատասփիւռ ժողովին, տեղեկացնելով թէ ազատուել է Նիկոլ արքեպիսկոպոսի բանտարկութիւնից եւ

խնդրում է, որ ազդարարութիւն գրուի նոյն արքեպիսկոպոսին²⁵:

Հակառակ որ Չաքարիային Հաւատասփիւռ ժողովից սահմանուել էր թոշակ, սակայն նա դեռ ոչինչ չէր ստացել: Չաքարիայի կողմից կայ շարադրուած մի նոր խնդրագիր, ուր յիշեցնելով թէ մեկ ու կէս տարի առաջ Նիկոլ արքեպիսկոպոսից ստացել էր քահանայական ձեռնադրութիւնը եւ ներկայումս Հաւատասփիւռ ժողովից խոստացուած տարեկան 50 սկուղի վճարմանն է սպասում:²⁶ 1648 թ. ապրիլի 22-ի նիստին Հաւատասփիւռ ժողովը որոշում է նոյն գումարը փոխանցել Չաքարիային Լէոպոլսի Յիսուսեանների միջոցով:²⁷

Լէոպոլսից Չաքարիան անցնում է Վարչաւա, որտեղից երկու նամակ ունի գրած Հաւատասփիւռ ժողովի քարտուղարին, 1648 թ. յուլիսի 1-ով եւ հոկտեմբեր 3-ով թուագրուած: Առաջին նամակում պատմում է Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչից կրած հալածանքների մասին, խնդրելով, որ իրեն սահմանուի Լէոպոլսից տարբեր տեղ որեւէ առաքելավայր, ինչպէս նաեւ լատին ծէսով պատարագելու հրաման, քանի որ գրկուած է Հայկական ծիսական եկեղեցական զգեստներից ու սպասքից: Երկրորդ նամակով խնդրում է նաեւ թոշակ, քանի որ դեռեւս այն Յիսուսեաններից չէր ստացել, ինչպէս նաեւ ձեռնադրութեան վկայական եւ այլ վճռագրեր, քանի որ նախկին ունեցածնե-

23 St'u Acta, vol. 17, f. 450, n. 2:

24 St'u SOCG, vol. 65, f. 165rv:

25 Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչի կատարած գեղծարարութիւնների առիթով Չաքարիայի կողմից բողոքագրեր էին ուղարկուել ինչպէս Հռոմ, այնպէս էլ Լեհաստանի թագաւորին: Նրանց միջեւ առաջացած խնդիրներին չեմք անդրադառնում: Այն մանրամասնօրէն ուսումնասիրում է Հ. Գրիգորի Պետրովիչի կողմից (մանրամասն տե՛ս Gr. Petrowicz, *L'unione degli Armeni con la S. Sede*, Roma, 1950, pp. 121-125):

26 St'u SOCG, vol. 417, f. 190rv:

27 AP, Congregazioni Particolari, vol. 9, f. 224, n. 4.

ըը բռնագրաւուած են Նիկոլ արքեպիսկոպոսի կողմից:²⁸

1649-1651 թթ. երեք տարիներին Ջաքարիան պիտի գործած լինէր Սեբաստիայի շրջակայքում, Թոխաթում, իբրեւ քարոզիչ. այս շրջանի մասին որեւէ փաստաթուղթ մեզ յայտնի չէ:²⁹

1652 թ. մայիսին Հալէպում, լատին վանքերի երեք մեծաւորների կողմից իրեն տրուել է մի վկայական, որի համաձայն Լեհաստանից անցել է Սեբաստիա, որտեղից հայ հերձուհիները հալածել են իրեն որպէս կաթողիկէի, ինքը մեկ ամսից աւելի Հալէպում է. թէ երբեմն իրեն հնազանդութեան կոչեր են լինում կաթողիկոսի կողմից, սակայն ինքը զգոյշ է եւ ապրում է աղքատ: Վկայականը ստորագրել են Fr. Bruno-ն S. Yvone-ից (կարմեղեան), Amatus Chezaud-ը (Յիսուսեան) եւ Fr. Silvestre-ը (վեղարաւոր)³⁰ (պատկեր 1):

28 Տե՛ս SOCG, vol. 65, f. 130r-131v:

29 Հոմի Casanatense գրադարանի հայերէն ձեռագրերի շարքում պահուող Պետրոս Արագոնացու Գիրք առաքինութեան ձեռագրի գրիչներից մեկը՝ Սիւնեցի տէր Ջաքարիան, հաղորդելով որ ձեռագիրը «գծագրեցաւ ի Հալսայ քաղաքի... ի թվին ՌՃԱ, [1652]», միաժամանակ յիշում է. «Ես, տէր Ջաքարիա Սիւնեցի, աշակերտ եռամեծին Կղէմէս քաջ րարունապետին, վարժեալ եւ ուսեալ ի մեծն Հոմ ընդ հովանեաւ սրբոցն զխատր առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Թվին ՌՂԴ [1645]: Ձեռագրի յիշատակագրութիւնների մեկում հաղորդում է. «Ես, տէր Մաթէոս [Սասնիսե՞աց], ի կարգէն Քարոզողաց, ի դառնալն իմում ի մեծէն Հոմայ, հանդիպեցայ երկիցս տէր Ջաքարիա եղբորս իմում, առաջին անգամ ի Լեհն եւ երկրորդն ի Թօխաթ» (տե՛ս Catalogo dei manoscritti armeni delle biblioteche d'Italia. A cura di Gabriella Uluhogian, Roma: Istituto poligrafico e zecca dello stato, 2010, pp. 351, 352):

30 Տե՛ս SOCG, vol. 292, f. 239rv: Հալէպում կարմեղեան Bruno de Saint-Yves-ի, յիսուսեան Amatus Chezaud-ի եւ վեղարաւոր Fr. Silvestre de Saint-Aignan-ի գործունէութեան մասին աւելի մանրամասն տե՛ս Olivier Salmon, *Alep dans la littérature de voyage européenne pendant la période ottomane (1516-1918)*, Tome I, Alep, El-Mudarris, 2011, pp. 61-70.

Ջաքարիան դեռեւս Հալէպում էր 1652 թ. նոյեմբերին, համաձայն իր իսկ ընդօրինակած ձեռագրի յիշատակարանի, ուր շեշտում է Կղէմէս Գալանոսի աշակերտ լինելը. «Աւարտեցաւ սուրբ մատեանս ի թուականիս Հայոց ՌՃԱ [1652] ի նոյեմբերի Ի [20], ի քաղաքն Տիբերայ որ է Ալսայ, ի ձեռն յօքնամեղ տէր Ջաքարիայ Սիւնեցույ, աշակերտի Կղէմէս աստուածաբան վարդապետի, ի վայելումն իւրոյ անձին եւ յիշատակ իւր եւ ընտանեաց իւրոց»: Ձեռագիրը, հաւանաբար, ինքն էլ իր ձեռքով Հոմ է բերել եւ ներկայումս պահուում է Վատիկանի առաքելական գրադարանում³¹:

Հալէպում եղած շրջանին Ջաքարիայի անունից Հաւատասփիւռի ժողովին են ներկայացնում խնդրագրեր³², որոնք զեկուցուել են 1652 թ. օգոստոսի 19-ի եւ դեկտեմբերի 3-ի նիստերին, ուր համաձայնութիւն է կայացուել դրամական միջոցներով օգնել Ջաքարիային, միաժամանակ արագացնելով թոշակի փոխանցումը:³³

1653 թ. սկզբին Ջաքարիան արդէն վերադարձել էր Հոմ եւ Հաւատասփիւռի ժողովին է ներկայացրել ինչպէս Հալէպից բերած վկայականը (տե՛ս վերեւում), այն-

31 Տե՛ս Evgenius Tisserant, *Codices Armeni Bibliotheca Vaticanae Borgiani, Vaticani Barberiani Chisiani*, Roma, 1927, p. 31, ձեռ. Borg. Arm. n. 24, f. 396: «Յիշատակ այս գիրքս Սիսիանցի տէր [Ջաքարիա վարդապետին]», (ժողովածոյ) - Codex Vaticanus armenus, 16 (102v) -

«Ջաքարիա մեղօք մեռեալ սիւնեցի, / զձեզ պաղատիմ որք հանդիպիք այսմ տառի. / յիշման անէք զիս արժանի. / ծնողօք զարմիք մերովք նախնի / եւ ամենայն արեանաւորի. / բանիս ասել Տէր ողորմի. / յաւէտ եւ ձեզ նոյնն լիցի: / Ձի միաբան յօրն վերջի. / յանփոխանորդն առաւօտի միում ութեանն եռանձնէի / երեք սրբեան փառսն երգեսցի: / Չոր եւ զայ շարադրեցի. / յամսեան մարտին ի ցանկ հանի. / ի թվականիս հայոց զարմի / ՌՁ ըլստ չորրորդի [1645]» (նոյն տեղում, էջ 277):

32 Տե՛ս օրինակ՝ SOCG, vol. 292, f. 444:

33 Տե՛ս Acta, vol. 21, f. 104, n. 26; f. 133, n. 17:

պէս էլ ինքնագիր խնդրագիր, որը գեկուցւում է Հաւատաստագրութիւնի 1653 թ. փետրուարի 10-ի նիստին: Խնդրագրում Զաքարիան պատմում է թէ եօթ տարի ինչ հալածանքներ կրեց ազգակիցներից, չնայած հակառակ դրան շատ հայեր դարձրեց ճշմարիտ հաւատքի եւ ներկայումս վերադարձել է Հռոմ հանգստանալու այն հալածանքներից, որ կրեց հայ եպիսկոպոսներից ու կաթողիկոսներից: Խնդրում է թոշակ, քանի որ եօթ տարուայ առաքելութեան ընթացքում միայն երեք տարի է ստացել Հաւատաստագրութեան ժողովի սահմանած թոշակը:³⁴ 1653 թ. փետրուար 10-ի նիստում գեկուցւում է այս խնդրագիրը եւ սահմանւում է, որ Զաքարիային վճարուի ամսական 5 սկոլդ, մինչեւ որ [Ուրբանեան] վարժարանում տեղ բացուի եւ տեղաւորուի իբրեւ ուսուցիչ:³⁵

Զաքարիա Աղամը եւ Կղեմէս Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի եկեղեցւոյն Հռովմայ» աշխատութիւնը:

Հռոմում Զաքարիան որոշակի դեր է խաղում Կղեմէս Գալանոսի գրքերի հրատարակութեան ժամանակ: Անկասկած, Հռոմում Զաքարիան ստիպուած ջանքեր էր գործադրում որեւէ օրինաւոր պաշտօն ձեռք բերելու եւ որոշակի գումար ստանալու՝ ապրելու համար: Այդպիսի առիթ է ներկայանում Կղեմէս Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի եկեղեցւոյն Հռովմայ» աշխատութեան երկրորդ հատորի հրատարակութեան ժամանակ:

Կղեմէս Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի եկեղեցւոյն Հռովմայ» աշխատութեան երկրորդ հատորը բաժանուած է երկու մասի, որոնց-

ից առաջինը՝ անուանաթերթի համաձայն տպուել է 1658ին եւ ունի 487 էջ³⁶, երկրորդ մասը տպուել է 1661, ունի 772 էջ³⁷:

Երկրորդ հատորի տպագրութիւնը սկսելուց առաջ՝ տպագրելի ձեռագիրը յանձնւում հայագրի Տէր Զաքարիա Աղամին, թէ՛ իբր գրաքննիչ, եւ թէ՛ հայերէն լեզուին քաջածանօթ լինելով, մաքուր օրինակելու համար:

Հաւատաստագրութեան ժողովի 1655 թ. յունիսի 21-ի նիստին որոշւում է Տէր Զաքարիայի մատուցած այս ծառայութեան վճարը՝ ամսական երեք սկոլդ՝ չորս ամիս ժամկէտով, Գալանոսին օգնելու համար³⁸:

Ամենայն հաւանականութեամբ, տպագրութեան ձգձգուելու պատճառով, ընդարձակ գործը չորս ամսուայ ընթացքում հաւարտելով՝ Զաքարիան նոր խնդրագիր է ներկայացրել եւ Հաւատաստագրութեան 5 հոկտեմբեր 1655ի նիստին որոշւում է վեց ամսով երկարաձգել ամսականի վճարումը³⁹:

Բնական ենք համարում, որ Տէր Զաքարիայի նման կղերականները օգտագործում էին նման առիթները՝ հեշտութեամբ ամսավճարներ ձեռք բերելու եւ ապրելու համար: Ունենք Տէր Զաքարիայի մեկ անթուական խնդրագիրը, որի պարունակութիւնից դատելով, թուագրելի է 1656 տարուայ առաջին երկու ամիսներով, հետեւեալ բովանդակութեամբ. «Վարժարանի օղը աննպաստ լինելով տէր Զաքարիա Աղամի համար, խնդրում է լրացուցիչ գումար՝ օղափոխութեան եւ առողջութիւնը վերականգնելու համար, որպէսզի աւարտի «Միաբանութիւն եկեղեցւոյն Հայոց ընդ Հռովմայ» գիրքը, որ գրեթէ հասել է աւար-

34 Տե՛ս SOCG, vol. 292, f. 416rv:

35 Տե՛ս Acta, vol. 22, f. 15, n. 21:

36 Նիկեյ Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաւալեան, Հայ գիրքը 1512-1800 թուականներին. Հայ հմաստիպ գրքի մատենագիտութիւն, Երեւան, 1988, էջ 33-34:

37 Նոյն տեղում, էջ 37-38

38 Տե՛ս Acta, vol. 24, f. 29, n. 12:

39 Տե՛ս Acta, vol. 24, f. 69, n. 25:

տին, այնուհետեւ զնալու համար իր առաքելութեանը՝ եթէ ձեր վսեմութիւնը պատշաճ գտնի»⁴⁰:

Տէր Զաքարիայի դերն աւարտած լինելով՝ ձեռագիրն էլ պատրաստ էր տպագրութեան յանձնուելու: Զգտանք Գալանոսի խնդրագիրը՝ երկրորդ հատորի տպագրութեան համար, սակայն Հաւատասփիւռ ժողովի 4 ապրիլ 1656-ի նիստի արձանագրութիւնն ասում է. «Միաբանութիւն Հայոց...», հտ. Բ, կարգինալ Carponi-ն հաստատում է, թէ կարգացել եւ մասնագէտների հետ քննել է տպագրելի հատորը ու հատորում տեսել է խոր հմտութիւն, քանի որ գիտական կերպով ցոյց են տրւում Հայոց սխալները եւ թէ Հայոց դարձի համար շատ օգտակար պիտի լինի նրա տպագրութիւնը: Ս. ժողովը նկատում է, որ Առաջին տպուած հատորի մասին ցարդ լսել է եղել միայն գովասանք, եւ վճռում է, որ տպագրուի նաեւ երկրորդ հատորը, գովելով Կղեմէս Գալանոսի անձը, որ «անթիւ բարիք է անում Հայոց մէջ»⁴¹:

Հաւատասփիւռի ժողովի այս վճռով գործի տպագրութիւնը պիտի սկսուած լինէր: Տէր Զաքարիան դարձեալ ընդգրկուած է աշխատանքներում՝ իբր «գրաքննիչ»: 12 յունիս 1656-ի նիստով որոշուում է, հաշուի առնելով Գալանոսի արժանիքները, շարունակել վճարել Տէր Զաքարիայի ամսական երեք սկուզը՝ մինչեւ գրքի տպագրութեան աւարտը⁴²:

Հաւատասփիւռի ժողովի քարտուղարը անհամաձայնութիւն է յայտնում այս որոշմանը, ու առ այս 11 ապրիլ 1658-ի նիստին տալիս է մի ընդարձակ տեղեկատուութիւն, որի արձանագրութիւնը հետեւեալն է. «Ս. ժողովը նախորդ տարիներին որոշեց տէր Զաքարիա Աղամին տալ ամ-

սական երեք սկուզ՝ իբրեւ Կղեմէս Գալանոսի գրքի գրաքննիչ: Սակայն ես այն ժամանակ իսկ՝ չուզեցի ստորագրել անուած որոշումը ու խորհրդածեցի ասելով. գրաքննիչները երկուսն են. Առաջին՝ տպագրութիւնից առաջ, վաւերացնելու համար գրքի տպագրութիւնը. երկրորդ՝ տպագրութեան ընթացքում՝ սրբագրելու համար տպագրական վրիպակները: Առաջինի նկատմամբ. այս գրաքննութիւնը ամբողջ գրքին կատարուում է տպագրութիւնից առաջ եւ ոչ թէ տպագրութեան ընթացքում, որ կարող է ամիսներ տեւել, եւ Ս. ժողովի վրայ շատ թանկ է նստում՝ շարունակ վճարելով գրաքննչին: Երկրորդի նկատմամբ՝ Կղեմէս Գալանոսն անձամբ ինքն է, որ կատարում է բոլոր տպագրական փորձերի սրբագրութիւնները:

Այլեւս որեւէ պատճառ չկայ Տէր Զաքարիային վճարելու համար: Ծիշտ է, որ այս քահանան երկար տարիներ ծառայել է Ս. ժողովին եւ լաւ անձնաւորութիւն է եւ ապրելու ուրիշ միջոց չունի եւ թէ շատ լաւ գիտէ լատիներէն, աստուածաբանութիւն եւ Հայոց մէջ էլ նմանը գտնել դժուար է: Արդ, իրեն վճարելու պատճառը կը լինի «տպագրութեան գրաքննիչ», որովհետեւ օտար լեզուների գրաքննիչի կոչումը ունի Աբրահամ Հեկտորը, որը հայերէն չգիտի»⁴³:

Երկրորդ հատորի տպագրութեան ընթացքում ունենք Գալանոսի մեկ նամակը, անթուական եւ առանց ստորագրութեան, ուղղուած մի կարգինալի, հաւանաբար տպարանի պատասխանատուին. «Հիւանդ, անկողնում լինելով՝ դիմում եմ գրաւոր ու

40 St' u SOCG, v. 292, f. 413:

41 St' u Acta, vol. 25, f. 35, n. 3:

42 St' u Acta, vol. 25, f. 52, n. 1:

43 St' u Acta, vol. 27, f. 111-112, n. 1: Այս օրերին է, որ Մատթէոս Ծարեցի Առնունու էր, տպագրական հարցերով: Նոյն այս ցիստին է, որ որոշում է Մատթէոսի կողմից տպագրութեան ցախատեսուած «Սաղմոսարանն» ու «Յիսուս Արդին» Տէր Զաքարիան քննէ իբր գրաքննիչ եւ այս տիտղոսով սահմանում շարունակել Տէր Զաքարիայի ամսական երեք սկուզի վճարումը:

խնդրում եմ, որ նկատի առնէիք երկու կէտ. առաջին՝ ձիուզէփփէն (Giuseppe) լինելով ծեր եւ տեսողութեամբ տկար, անկարող է շարելու հայերէն (տպագրական) տառերը, երբեւէ արած չլինելով՝ շատ սխալներով է որ շարում է. ահագին դժուարութեամբ սրբագրում եմ իր պատրաստածը եւ ուզում է շարունակել գործել՝ թէ հայերէն եւ թէ լատիներէն բնագիրների համար: Ինքը կարող է շարունակել լատիներէնը, իսկ հայերէնը թողնել Նիկոլո (Nicolo) աշակերտին՝ որ դուք նշանակել էք եւ շատ լաւ հայերէն կարգալ է սովորել: Հիմա, խնդրում եմ հրահանգէք, որ միայն Nicolo-ն զբաղուի հայերէնով, որովհետեւ ձիուզէփփէի շարածի մէջ սխալները անհամար են՝ որ սրբագրելն անգամ անհնարին է դառնում: Երկրորդ խնդրանքս է, որ գործածուի ընտիր մելան, որովհետեւ շատ անգամ անընթեռնելի է տպուածը»⁴⁴:

Գալանոսի խնդրանքը, հաւանաբար, նկատի է առնուել. 30 յուլիս 1657 թուականի մի փաստաթղթի համաձայն՝ Գալանոսի գրքի գրաշար «Nicola Nairiono»-ի համար որոշուում է, որ իւրաքանչիւր պրակի համար վճարուի ոչ թէ իննը այլ տասներկու *giuli*⁴⁵: Այս դիմումը կատարել է Գալանոսը՝ համեմատելով գործը Հաւատասփիւռի տպարանից տարբեր տպարանների մէջ կատարուած վճարների, ինչպէս նաեւ գրաշարին քաջալերելու համար⁴⁶:

26 նոյեմբեր 1658-ին Գալանոսը հրաման է խնդրում ստանալու Ուրբանեան վարժարանի գրատան հայերէն ձեռագիր Մաշտոցը, քննելու համար զանազան մանրամասնութիւններ՝ որոնք կարելոր են իր գրքի այն հատուածի համար, ուր խօսում է սուրբ խորհուրդների կիրարկութեան մասին⁴⁷:

Երկրորդ հատորի երկրորդ մասի, որ հեղինակի կողմից կոչւում է «Երրորդ հատոր», տպագրութիւնը ընդհատուել էր ժանտախտի հետեւանքով Հռոմում Հաւատասփիւռի տպարանի փակուելու պատճառով: Գալանոսը Հռոմի մէջ բացած վարժարանին մասին զանազան տեղեկութիւններ Հաւատասփիւռի քարտուղարին գրելուց յետոյ, նամակի վերջաւորութեանն ասում է. «Յիշեցնում ձեզ, որ գործիս Գ. հատորը՝ որ արդէն տպուած է՝ բայց չի աւարտած, պակասում է Ս. Խորհուրդների մասը (տե՛ս տպագիր, էջ 489-772), որ ամենից կարելորն է: Մի տարի է որ տպարանը չի աշխատում»⁴⁸: Հինգ ամիս յետոյ էլ դեռ որեւէ շարժում չի նկատուում: Հաւատասփիւռի քարտուղար Ալբերիչին - Գալանոսից Հայոց մասին տեղեկութիւն խնդրած լինելով, վերջինս գրաւոր կերպով ընդարձակ պատասխան է տալիս 14 դեկտեմբեր 1660-ին, ու վերջաւորութեանը դարձեալ առիթը օգտագործելով՝ գրում է. «մեր աշխատութեան երրորդ հատորը, հարիւրից աւելի մամուլների տպագրուելուց յետոյ՝ ընդհատուեց, եւ տարուց աւելի է, որ չի աշխատում: Ասում են, թէ յունուարին սկզբին ուզում էին վերսկսել, եւ սակայն մինչեւ այսօր չեն սկսել: Ես անմահ չեմ, վախենում եմ, որ մահիցս յետոյ գործն այսպէս անկատար կը մնայ եւ սակայն մի գիրք է, որ միւսներից աւելի կարելոր է: Ուրիշ բան չի մնացել տպելու բացի Ս. Խորհուրդների հատուածից, ուր

44 Տե՛ս SOCG, vol. 182, f. 13: Դիւանի այս նույն հատորում f. 206, "Giuseppe Luna maronita"-ն ասում է, թէ 32 տարի առաջ փափագել է գնալ Լիբանան եւ Հաւատասփիւռի ժողովը իրեն պահել է Հռոմում՝ իբր արեւելեան լեզուներով տպագրիչ մասնագետ: Նկատելի է որ, Հաւատասփիւռի տպարանը սկսել է գործել 1623-ին, սպա այս խնդրագիրը գրուած պէտք է լինի մօտ 1655-ին, իսկ Գալանոսի բողոքը գրուել է մօտ 1657-1660 տարիներին:

45 Հռոմէական արծաթէ մանրատրամ:

46 Տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 533:

47 Տե՛ս SOCG, vol. 221, f. 7:

48 Տե՛ս SOCG, vol. 366, f. 8:

Հերքում են այն սխալները որ հայերը գործում են խորհուրդների մատակարարություն ընթացքում: Խնդրում ենք հրահանգելք տպագրություն վերսկսումը եւ Ս. Ժողովին որոշման գործադրումը»⁴⁹:

Տպագրությունը աւարտուելուն պէս, 27 ապրիլ 1662-ին Գալանոս նամակով տեղեկացնում է Հաւատաստիւնի քարտուղարին՝ թէ վերադարձնում է Յակոբ Առաքելի կաթողիկոսի նամակի բնագիրը եւ նրա թարգմանությունը, յանձնարարելով, որ խնամքով պահուի դիւանում՝ Հայէպի Դաւիթ եպիսկոպոսի 15 մայիս 1661 թուակիր նամակին հետ միասին, որպէսզի չկորի՝ ինչպէս պատահել էր նախորդ քարտուղարություն ընթացքում: Ապա Գալանոսը համարձակում է գրել. «երկու խնդրագիրներ կայացրի, ուր տեղեկացնելով թէ աւարտուել է գրքիս Գ. հատորի տպագրությունը եւ խնդրում էի օրինակներ՝ ինչպէս սովոր է տալ Ս. Ժողովը, որպէսզի վաճառեմ եւ պարտքերս վճարեմ, որովհետեւ այս հատորը 200 մամուլից աւելի եղաւ, իսկ նրա ձեռագիրը՝ աւելի ընդարձակ էր, որի համար ծախս արեցի եւ դեռ չեմ վճարել: Թէեւ քաշուում եմ նման խնդրագիրներ կայացնելով, սակայն ուրիշ ելք չունեմ: 26 տարի ծառայել եմ Ս. Ժողովին եւ յուսով ստանալ այս շնորհները»⁵⁰:

12 մայիս 1662-ին Գալանոս գրում է մի նոր խնդրագիր, խնդրելով Գ. հատորից

49 Տե՛ս SOCG, vol. 223, f. 76: Ծատ Բաւանակյան է, որ Գալանոսի յորդորով Տէր Զաքարիա Աղամն էլ էր խնդրագիր ներկայացրել գրքի տպագրութեան առաջացման համար. «Զաքարիա Աղամն, որ Գալանոսի հետ առաքելութեան պիտի մեկնի, հազիւ թէ ասարտի տպագրութիւնը, ինչպէս խոստացել էր Գալանոսը: Բայց գրքի տպագրութիւնը ժանտախտի պատճառով ընդհատուած լինելով՝ երկար ժամանակից ի վեր Գալանոսի հետ մնում եմ Հոռոմում, սպասելով գործին ասարտին: Խնդրում եմ, որ վերսկսուի գործը, որովհետեւ Ապտուծոյ շնորհքով ժանտախտը գրեթէ վերջացել է» (անթուական, տե՛ս SOCG, vol. 292, f. 451):

50 Տե՛ս SOCG, vol. 225, f. 47:

իրեն համար օրինակներ, ապա կարեւոր ծանօթութիւն է տալիս. «... աւարտեցի Գ. հատորի տպագրությունը, ինչպէս նաեւ Բ. հատորի քառասուն մամուլների տպագրությունը, որ փափագել էր ձեր վսեմությունը»⁵¹: 22 մայիս 1662-ի նիստով նկատի է առնուում Գալանոսի արդար խնդրանքը եւ նրան շնորհուում է Գ. հատորից 30 օրինակ, ընդամէնը նախորդ ստացածի հետ կազմելով 50 օրինակ⁵²:

Այսպիսով Գալանոսի «Միաբանութեան» երեք հատորների տպագրությունը, միջանկեալ ընդհատումներով, տեւեց շուրջ տասնչորս տարի (1648-1662), որին իր աշխատանքային մասնակցութիւնը ունեցաւ Զաքարիա Աղամն:

1655 թ. յունիսի 21-ին Հաւատաստիւնի կողմից որոշուում է Զաքարիային չորս ամսուայ համար տալ ամսական երեք սկուդ՝ Գալանոսին օգնելու համար⁵³: Տպագրութեան ձգձգուելու պատճառով նոյն տարուայ հոկտեմբերի 5-ին որոշուում է երկարաձգել ամսականը եւս վեց ամիս⁵⁴: 1656 թ. յունիսի 12-ին, հաշուի առնելով Գալանոսի արժանիքները, որոշուում է շարունակել Զաքարիայի վճարումը մինչեւ տպագրութեան աւարտը⁵⁵: Եւ քանի որ տպագրութիւնը չափազանց երկարուում էր, Հաւատաստիւնի քարտուղարը միջամտելով ընդհատում է Զաքարիայի վճարումը «իբր սրբագրիչ», բայց հաշուի առնելով նրա անցեալ արժանիքները, հայերէն լեզուին քաջածանօթութիւնը, հայոց մէջ նրա նմանին գտնելու դժուարութիւնը՝ սահմանում է նրան ամսական երեք սկուդ թոշակ նշանակել⁵⁶: Զաքարիան նախապէս, իբրեւ Հոռոմի հայոց խոստովանահայր

51 Տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 221:
 52 Տե՛ս Acta, vol. 31, f. 61, n. 8:
 53 Տե՛ս Acta, vol. 24, f. 29, n. 12:
 54 Տե՛ս Acta, vol. 24, f. 69, n. 25:
 55 Տե՛ս Acta, vol. 25, f. 52, n. 1:
 56 Տե՛ս Acta, vol. 27, f. 111-112, n. 1:

եւ հոգեւոր հովիւ, ամսական ստանում էր երկու սկուդ: Ամսական հինգ սկուդն անբաւարար համարելով՝ Ջաքարիան խընդրում է յաւելում, հակառակ պարագային խնդրում է հայրենիք վերադառնալու հրաման⁵⁷: 1658 թ. օգոստոս 16-ի նիստում վերահաստատում է նրա երեք սկուդ ամսականը, որպէսզի շարունակի Հաւատասփիւռ ժողովի թարգմանի եւ Հռոմի հայոց հոգեւոր հովուի իր նախկին պաշտօնը:⁵⁸

1657 թ., երբ Մատթէոս Ծարեցին Աստուածաշնչի տպագրութեան համար Հռոմ եկաւ, Ջաքարիան ամեն ինչով աջակցում էր նրան, անշուշտ մտածելով, որ գործի յաջողութեան պարագայում ինքն, անկասկած, կարող էր յատուկ թոշակի արժանաւալ որպէս այդ գործի գրաքննիչ եւ սրբագրիչ⁵⁹: Յիշելի է միայն, որ Մատթէոս Ծարեցու գրած խնդրագրում գրիչն ինքնիրեն հետեւեալ կերպ է ներկայացնում. «Տէր Զաքարիա Աղամ, Հռոմում բնակուող հայերի խոստովանահայր»⁶⁰: Մատթէոս Ծարեցու տպագրութեան համար նախատեսուած «Սաղմոսարան»-ի, Ներսէս Շնորհալու «Յիսուս որդի» գրքերը Հաւատասփիւռի ժողովը յանձնարարում է Ջաքարիա Աղամին, որպէսզի Գալանոսի հետ միասին սրբագրեն եւ տան իրենց կարծիքորոշումը:⁶¹ Հռոմից Ծարեցու մեկնումից յետոյ մեզ ոչինչ յայտնի չէ Ջաքարիային յանձնուած գրքերի ճակատագրի մասին:

Ջաքարիա Աղամի գրական վաստակի մասին խօսելիս յիշենք նաեւ, որ 1656 թ. Հաւատասփիւռ ժողովի քարտուղարի ցուցմունքի համաձայն նուիրուած է շարադրելու հայերէնով մի շարք գրքեր, ո-

րոնք անշուշտ հոգեւոր բնոյթ ունէին: Այս տեղեկութիւնը քաղել ենք իր մի խնդրագրից, ուր խնդրում է իրեն ամսական վճարել երեք սկուդ, որպէսզի կարողանայ կատարելագործել մի շարք գրքեր, որոնք լաւ ծանօթ են գերապայծառ քարտուղարին:⁶²

1658 թ. Հռոմի Ս. Մարիամ եկեղեցու հայոց հիւրանոցի ձեռագրերից մեկում (Ջահկեցիների Ծառոցում) թողել է հետեւեալ յիշատակագրութիւնը (պատկեր 2).

«Տէր Զաքարիա Առաստ հոգի /Զարմէ Հայոց Սիսիանցի /Որ մականուամբ Աղամ կոչի / Որդի առն շինականի, / Հնգօք ամօք ի յաստ կացի / Յեկեղեցիս մերոյ ազգի, / Որ է շինեալ յանուն սրբոյն / Մարիամու Եգիպտոհոյն./ Ի թվականիս Հայոց զարմի/ Հազար հարիւր եւ եօթնեկի [1658]/ Մարտի ամսոյն շարագրեցի / Տասնէւչորսին աւարտեցի»:⁶³

Ապա՝

«Տէր Զաքարիա Սիւնեաց տանէ/ Ռամիկ գեղջուկ Բանունեցէ/ Աշակերտեալ ռաբունապետէ/ Աստուածաբան Կղէմենթէ: / Բազում ամօք աշ[խ]ատեցայ / Յամենեցունց յետնեալ գտայ, Բանգի միջօք փարթամացայ Ի շնորհաց Հոգւոյն աղքատացայ: / Զքեզ աղաչեմ հանդիպօղբ բանիս, /Յիշման առնէք զիս զեղկելիս, /Թերես Տէրն ողորմեացի / Յաղտոյ մեղաց զիս սրբեացէ, Ի թվականիս Հայոց սետի / Հազար հարիւր ընդ եօթնեկի, / Մարտի ամսոյն շարագրեցի / Սակաւ բանիս յաւարտ հանի»⁶⁴:

57 Տե՛ս SOCG, vol. 316, f. 113rv:
 58 Տե՛ս Acta, vol. 27, f. 219, n. 20:
 59 Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Ս. Ծեմճեմեան, Հայ տպագրութիւնը եւ Հռոմ, Վեներիկ-Ս.Ղազար, 1989, էջ
 60 Տե՛ս AP, Fondo Vienna, vol. 22, f. 529:
 61 Տե՛ս Acta, vol. 27, f. 111-112, n. 1:

62 Տե՛ս SOCG, vol. 292, f. 409rv:
 63 Սբ. Ղազարի մատենադարան, ձեռ. թիւ 1266, թղթ. 235: 1372 թ. գրուած այս ձեռագրի («Ծառոց լատինաց») նկարագրութիւնը տե՛ս Հ. Սահակ Ծեմճեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վեներիկ, հտ. Դ, Եարակնոց-Ծառոց-Ժամագիրք-Խորհրդատետր-Մանրուսումնը-Կցուրդք, Վեներիկ-Ս. Ղազար, 1993, էջ 847-860, Զաքարիա Աղամի յիշատակարանների հրատարակութիւնը տե՛ս նոյն տեղում, էջ 857-858:
 64 Սբ. Ղազարի մատենադարան, ձեռ. թիւ 1266, թղթ. 235բ:

1659 թ. Զաքարիան դիմում է նոր խնդրագրով, ուր ներկայանալով որպես Հռոմի հայոց խոստովանահայր եւ հոգեւոր հովիւ, տեղեկացնում է ուխտաւորների խնդրանքով թարգմանաբար շարադրուած մի գրքի մասին, որով ծանօթութիւններ է հաղորդում Հռոմի գլխաւոր եկեղեցիների, այնտեղ պահուած մասունքների, ներում ստանալու վայրերի մասին: Խնդրում է տպագրութեան թոյլտուութիւն, քանի որ ուխտաւորները հակուած էին հոգալու բոլոր ծախսերը: Զաքարիայի հայերէն փոխադրած-թարգմանած գիրքը Fr. Pietro Martire Felini da Cremona dell'Ordine de' Serui-ի «Trattato nuouo delle cose maravigliose dell'alma citta di Roma» աշխատութիւնն էր:⁶⁵ 1659 թ. մարտի 3-ի Հաւատաստափիւռ ժողովի նիստում զեկուցում է Զաքարիայի խնդրագիրն ու պատասխանում. «ընթերցուեց»⁶⁶, որ նոյնն է, թէ ոչ մի որոշում չկայացուեց: Զաքարիան այս գիրքը հրատարակելու խնդրանքը կրկնեց չորս տարի յետոյ եւս, աւելացնելով նաեւ որ պատրաստում է լատիներէն-իտալերէն-հայերէն բառարան⁶⁷, սակայն այս խնդրագիրը եւս Հաւատաստափիւռ ժողովի կողմից թողնւում է անպատասխան⁶⁸, եւ գործերը մնում են անտիպ⁶⁹:

65 Տե՛ս SOCG, vol. 222, f. 28rv: Աշխատութիւնը յայտնի է 1610 թ. հրատարակութեամբ եւ 1615, 1617, 1619, 1625 եւ այլ թուականների վերահրատարակութիւններով:

66 Տե՛ս Acta, vol. 28, f. 44, n. 34:

67 Տե՛ս SOCG, vol. 223, f. 145rv:

68 Տե՛ս Acta, vol. 32, f. 9, n. 13:

69 Հռոմի ուխտավայրերի վերաբերեալ հայերէն լեզուով գիրք-ուղեցուցի պահանջարկը լատկապէս մեծանում էր Յոբելեան տարիների եւ Սուրբ դամբասանութեան կապակցութեամբ: Կարծես թէ Զաքարիայի ստաշարկում բացակայում էր այդ հաշտարկը, դրանով էլ պայմանաւորում ենք առաջարկի հանդէպ անհետաքրքրութիւնը: Նմանատիպ աշխատութիւններ պիտի հրատարակուէին աւելի ուշ, սակայն արդէն Յոբելեան տարուայ առիթով, 1725-ին (տե՛ս Նորագոյն ուղեկցութիւն հրեշտակային հոսմէական եւ մշտատեւ,

Անկասկած, Զաքարիայի գլխաւոր գործերից էր ապրուստի միջոցների որոնումը եւ ճիշտ այս նպատակով էր երբ Կղեմէս Գալանոսը 1660-1661-ին բացեց Հայոց համար առաջին վարժարանը, Զաքարիան վճարով վարժարանի համար նոտրգրով ընդօրինակում էր քառաւետարանները՝ եօթ սկուզով եւ ծախում է երկու ձեռագիր աստուածաշունչ 26 եւ 12 սկուզի:

Ծրագրեր կապուած տէր Զաքարիա Աղամի հետ

Զաքարիայի Հռոմում եղած տարիներին, այնտեղ էր գտնւում նաեւ Կղեմէս Գալանոսը: Վերջինս ուշիուշով հետեւում էր, տեսնելով Զաքարիայի կեանքը՝ Արեւելքում առաքելութեան ձախողումը, Հռոմ վերադարձը եւ Հաւատաստափիւռի թոշակով ապրելը իբր Հռոմի հայոց սրբագրիչ, թարգման ու Հռոմի հայերի խոստովանահայր եւ միշտ կարօտ դրամական աջակցութեան, եւ վերջիվերջոյ մտածելով լուծման մասին, Հաւատաստափիւռ ժողովի քարտուղար Ալբերիչիին ներկայացնում է հետեւեալ առաջարկը:

Գալանոսը համառօտ ներկայացնելով Զաքարիայի անցած կեանքը, որ հազիւ ուսումն աւարտած Հաւատաստափիւռ ժողովի կողմից իբրեւ միսիոներ ուղարկուեց Հայաստան, ուր մի քանի տարի գործեց յաջո-

սակա այց առնելոյ զեկեղեցիս ՚ի ներքս եւ ՚ի արտաքս Հոսմայ, ուր հոչակիին ուխտք եւ տօնախմբութիւնք: // Nuova Guida Angelica Perpetua Romana. Per visitare le Chiese dentro, e fuori di Roma. Եւ ՚ի լեզւէ իտալիականէ ածանցեցեալ եւ շարադրեցեալ ՚ի հայկական բարսուն, աշխատութեամբ Թօխաթեցոց տեսուն Յօնանու վարդապետին եւ եպիսկոպոսին: Հոսմ, տպ. Ուրբաւան, 1725) եւ 1775-ին (տե՛ս Հանգամանք ուխտելոյ գչորս եկեղեցիս Հոովմայ. Վասն ընդունելոյ զամենասուրբ յոբելեանն սուրբ տարւոյն: ... Թարգմանեալ յիտալական լեզուէ, ըստ խնդրոյ Սաղպազարեան մահտեսի Եգեկիլի կոստանդնուպօլսեցոյ Եւ ընծայեալ ի նոյնոյ ջերմետանդ ուխտաւորացն հայոց ի Հոսմ եղելոց: Հոովմ, 1775):

ղուլթեամբ: Այս մասին վկայում են ան-
ձամբ լատին միսիոներները, որոնք գրեցին
Հաւատաստութիւնին կամ Ջաքարիային, երբ
տարիներ յետոյ վերադարձաւ Հռոմ գան-
ձելու համար այն թոշակը, որ Հաւատաս-
տութիւն ժողովը խոստացել էր իրեն տալ ի-
բրեւ միսիոներին:

Ջաքարիան ներկայումս անգործ է,-
շարունակում է Գալանոսը,- ամսական ե-
րեք սկուզով, իբրեւ հայերէնի թարգման,
մինչդեռ կարող էր իբր միսիոներ աւելի
արդիւնաւէտ կերպով գործել Լեհաստա-
նում. մանաւանդ որ արքեպիսկոպոս Թո-
րոսովիչը ցանկանում է նրան ունենալ իր
կողքին հայերէնի ուսուցման համար, քա-
նի որ իր քահանաները չափազանց տգէտ
են: Ջաքարիան յարմար է նաեւ Մեծ Հայ-
քի (Armenia Maggiore) մէջ, ուր ենթակայ
է հայոց կաթողիկոսի բարեկամ Առաքել
է արքեպիսկոպոս Շոռոթեցու, որն էլ վկա-
յում է Յակոբ կաթողիկոսի կաթողիկէ դա-
ւանանքին դառնալու մասին:

Այս առաջարկներէր յետոյ Գալանոսն
անցնում է՝ խօսելու Նիկոլ Թորոսովիչի
անձի մասին, աւելացնելով թէ եօթնամե-
սունամեայ լինելով, երկիրը կայ, որ մեռ-
սունամեայ լինելով, երկիրը կայ, որ մեռ-
նելու է եւ նրա յաջորդը նշանակուելու է
էջմիածնի կաթողիկոսի կողմից, քանի որ
Լեհաստանի կաթողիկէներն էլ ուզում են,
որ իրենց եպիսկոպոսը ձեռնադրուած լինի
հայկական ծէսով՝ հայոց կաթողիկոսից:
Գալանոսն առաջարկում է Հաւատաստութիւն
ժողովին, որ հեռատես լինելով, նախապէս
պէտք է պատրաստուի կաթողիկոսի կող-
մից ձեռնադրուած մի եպիսկոպոս: Դրա
համար պէտք էր հասուն, գիտութեան մէջ
խորացած, հայերէն եւ լատիներէն լեզու-
ներին ծանօթ, Ուրբանեան վարժարանի ա-
շակերտ մի թեկնածու: Գալանոսի համար
որպէս նման թեկնածու երկու անձ կար-
Տէր Յովհաննէս Աբդալը, որ նոյն շրջանին
Հայկէպում էր եւ երկրորդը՝ Ջաքարիա Ա-
ղամն էր, որ Հռոմում էր: Նրանց համար,

որպէս ձեռնադրիչ կաթողիկոս, Գալանոսը
ներկայացնում է չորս կաթողիկոսներին՝
էջմիածնին, որ նման ձեռնադրութիւն
եղբեք չէր ձեռնարկի, Փոքր Հայքին, Ա-
ղուանքինը (Albania, իմա՝ Գանձասար) եւ
Աղթամարինը: Գալանոսը սրանցից յար-
մար տեսնում է Փոքր Հայքինը, որ ինք-
նաբերաբար առաջարկել է եպիսկոպոսու-
թիւն Տէր Յովհաննէս Աբդալին, որն էլ
հրատարուել էր՝ կաթողիկոսին կաթողիկէ
չհամարելով:

Գալանոսը Հաւատաստութիւն ժողովի
քարտուղարին հաղորդում է մի ուրիշ ման-
րամասնութիւն եւս: Գալանոսը Ջաքարիա-
յից իմացել էր, թէ իր դասընկեր Բալասանը՝
Ուրբանեան վարժարանի աշակերտ, 1648 թ.
մեկնելիս, Հաւատաստութիւն ժողովը Պապից
թոյլտուութիւն է ստացել, որ կարողանայ
ձեռնադրուել հայկական ծէսով հայոց կա-
թողիկոսներէր որեւէ մեկից: Արդ, ստուգե-
լով նախկին վկայա- գրերը Գալանոսն
առաջարկում է ներկայումս նոյնը կրկնել
Տէր Յովհաննէս Աբդալի եւ Տէր Ջաքարիա
Աղամի համար⁷⁰:

Գալանոսի գրութիւնը զեկուցւում է
Հաւատաստութիւնի ժողովի 1660 թ. սեպտեմ-
բեր 6-ի նիստին եւ որոշուում է հարցի լու-
ծումը յանձնարարել երեք կարդինալներին
(Brancacio⁷¹, Albrizio⁷², Azolino⁷³) եւ մի

70 St'u SOCG, vol. 221, f. 1r-2v:
71 Իմա՝ Brancacio Francesco Maria, կարդինալ, մա-
նացաւ 1675 թ., Հաւատաստութիւնի ժողովի բազ-
մալեզու տպարանի 38-ամեայ պրեֆետն էր
(տպարանի գործունէութեան եւ նրա պրեֆետկո-
նէրի մասին տե՛ս Willy Henkel, The Polyglot
Printing-office of the Congregation,- Sacrae con-
gregationis de Propaganda Fide. Memoria rerum.
1622-1972, Vol. I/1, Rom-Freiburg-Wien: Herder,
1971, pp. 335-351):
72 Իմա՝ Albrizio (Albrizi, Albizzi) Francesco
(1593-1684), կարդինալ, Հաւատաստութիւն ժողովի
քարտուղար (գործունէութեան գնահատականը
տե՛ս Josef Metzler, Die Kongregation in der
zweiten Hälfte des 17. Jahrhunderts,- Sacrae
congregationis de Propaganda Fide. Memoria
rerum. SS. 260-261).

քանի աստուածաբանների, որպէսզի քրն-նուի թէ ընդունելի՞ է արդէօք այդպիսի առաջարկը՝ իմա՛՝ ձեռնադրութիւնը ստանալ հերձուածողից:⁷⁴

Կասկածներ ու տարակոյսներ Տէր

Չաքարիայի մասին:

Տէր Չաքարիայի նկատմամբ Գալանոսի բարի տրամադրութիւնները շարունակուեցին նաեւ հետագայում, երբ Լէոպոլիս գնալուց յետոյ, ուր խօսելով Նիկոլ արքեպիսկոպոսի հետ եւ նրան համաձայն տեսնելով, 1665 թ. յունուար 16-ին դարձեալ առաջարկում է Հաւատասփիւռ ժողովի քարտուղարին որ լաւագոյն տարբերակը փոքրիկ թոշակով Չաքարիային Լէոպոլիս ուղարկելն է, քան նրա պարապ մնալը Հռոմում:⁷⁵

Հաւատասփիւռ ժողովի քարտուղարը, երբ Գալանոսի այս առաջարկը ներկայացնում է 1665 թ. ապրիլ 20-ի նիստին, իր կողմից աւելացնում է, որ կարմեղեան P. Francesco della Passione-ից իմացել է թէ Լիվոռնոյից Բոգդանիայի (Bogdania) Յովհաննէս եպիսկոպոսը իրեն գրել է Չաքարիայի մասին, իբր թէ նա Հռոմում հերետիկոս հայերին դարձի բերելու փոխարէն, նրանց հաստատում է իրենց սխալի մէջ:⁷⁶

Յաջորդ տարիներին Չաքարիայի մասին նման կասկածներն ու տարակուսանքներն աւելի են շատանում: Այդ գործում իրենց նամակներով յատկապէս կարեւոր դեր են խաղում լատինամէտ հայ գործիչներ Տէր Բարսեղը եւ Յովհաննէս Հոլովը, որոնք Ֆրանսիայից նոր էին վերադարձել Լիվոռնո: 1668 թ. յունիս 15-ի նամակով նրանք գրում են Հաւատասփիւռի ժողովի նախագահին եւ իրենց սովորութեան հա-

մաձայն չարախօսելով զանազան անձանց, անդրադառնում են նաեւ տէր Չաքարիայի անձին, որին ծանօթացել էին դեռեւս 1660-ին, երբ աշակերտում էին Գալանոսի բացած վարժարանում: Նրանք գրում են. «Տէր Չաքարիան, որ գտնուում է Հռոմում եւ հերետիկոս հայերի հետ գործառնութիւնների մէջ է, չգիտեմ ո՞ւմ կողմից է նշանակուել հայերի խոստովանահայր», առաջարկում են որ վրան հսկողութիւն սահմանուի, որպէսզի չարիքների առաջն առնուի⁷⁷:

Տէր Բարսեղն եւ Յովհաննէս Հոլովը այս նամակը գրելուց երեք օր յետոյ, յունիս 18-ին, աւելի ազատ կերպով են արտայայտուում Հաւատասփիւռի քարտուղար Baldeschi⁷⁸-ին գրած նամակում, գրելով, թէ տէր Չաքարիա 30 տարի է կատարում է Հռոմի հայոց խոստովանահայրութիւնը միայն չարիք հասցնելով կաթողիկէ հաւատքին, որովհետեւ իր նամակներով ու խօսակցութիւններով սխալների մէջ է հաստատում Վենետիկի եւ Լիվոռնոյի հայերին, եւ իրենց ասածի ճշմարտացիութիւնը ապացուցելու համար խոստանում են Հռոմ ուղարկել նմոյշներ Չաքարիայի գրած նամակներից:⁷⁹ Նոյն ամիսը դեռ չաւարտուած, այն է՝ 1668 թ. յունիսի 29-ին Տէր Բարսեղն ու Յովհաննէս Հոլովը մի նոր նամակ են ուղարկում Հաւատասփիւռ ժողովի նախագահին, առաջարկելով, որ Տէր Չաքարիայի փոխարէն Հռոմում նշանակուի մի այլ, աւելի գիտուն խոստովանահայր, որպէսզի ազգակիցներին ուղղի դէպի ճշմարտութիւն, այլ ոչ թէ հաստատի իրենց մոլորութիւնների մէջ:⁸⁰

73 Իմա՛՝ Azolino Decio, կարդինալ, Հաւատասփիւռ ժողովի անդամներից:

74 Տէ՛ս Acta, vol. 29, f. 235, n. 25:

75 Տէ՛ս SOCG, vol. 225, f. 215:

76 Տէ՛ս Acta, vol. 34, f. 77, n. 27:

77 Տէ՛ս SOCG, vol. 223, f. 346r-347v:

78 Իմա՛՝ 1668-1673 թթ. Հաւատասփիւռ ժողովի քարտուղար՝ Baldeschi-Ubaldini, Colonna Federico:

79 Տէ՛ս SOCG, vol. 223, ff. 350r-351v:

80 Տէ՛ս SOCG, vol. 223, ff. 356r-358v:

Սրանից շատ չանցած՝ տէր Բարսեղն ու տէր Յովհաննէս Հոլովը վճարուելով Լիվոնոյից ապաստանեցին Հռոմ: Հաւատասփիւռի ժողովի 1669 թ. նոյեմբերի 12-ի նիստին զեկուցուած է, որ պապական հրամանով եւ հայոց պաշտպան Card. Orsini-ի⁸¹ հաւանութեամբ, Հռոմի հայոց համար նշանակուած է երկու նոր ժամանածներից մեկը (հաւանաբար՝ Տէր Բարսեղը)՝ «Չաքարիա Աղամի փոխարէն, որի հաւատքի ամբողջութեան վրայ տարակոյսներ կան»: Միակ դժուարութիւնն այն էր, որ Ս. Մարիամ Եգիպտացու եկեղեցու բնակուող հայ քահանայի ամսականը մեկ սկուզէր, մինչ Տէր Բարսեղը 12 սկուզի պահանջ էր ներկայացրել ու հաշուի առնելով, որ Տէր Բարսեղը Հռոմում օգտակար պիտի լինէր Ս. ժողովին, յատկապէս Հռոմ հասնող հայերին կաթողիկէ դաւանութիւն ուսուցանելու եւ հաւատոյ դաւանութիւն անել տալու համար, նրան սահմանուած է ամսական 6 սկուզէ, որ այդ օրերի համար բաւական մեծ գումար էր⁸²:

Ինչպէս երեւում է, յաջորդ տարիներին Տէր Բարսեղը եղել է Հաւատասփիւռի ժողովի թարգմանն ու հայկական հարցերով անմիջական խորհրդականը, հարըստացնելով դիւանը իր նամակներով ու գրութիւններով, իսկ Չաքարիա Աղամը շարունակել է վարել հայերի խոստովանահօր պաշտօնը: Այս մասին ունենք երկու վկայութիւն: Վարդան Յունանեանը նկատել է որ 1675 թուականը Սուրբ Տարի լինելով՝ շատ հայեր պիտի ուխտաւորութեան համար Հռոմ այցելէին, այդ պատճառով առաջարկուած է Չաքարիա Աղամի փոխարէն իբրեւ խոստովանահայր նշանակել Տէր Բարսեղ Հոլովին եւ կամ թէ Ագարիա ճգնաւոր սարկաւագին, որ մօտակայ օրերին պիտի ստանար քահանայական

ձեռնադրութիւնը, աւելացնելով, որ Տէր Չաքարիան հոգեւոր հովիւ լինելուց աւելի՝ զբաղուած է վաճառականութեամբ, թանկարժէք քարեր կամ այլ իրեղէններ ծախելով Վենետիկի, Լիվոնոյի եւ Կ.Պոլսի հայրենակիցներին:⁸³

1677-ին Չաքարիա Աղամը դեռ Հռոմի հայոց խոստովանահայրն էր. 1677 թ. սեպտեմբերի 6-ի Հաւատասփիւռի նիստին զեկուցուած է Տէր Բարսեղի առաջարկը՝ ձեռնադրելու Ներսէսին եւ սահմանելու Ս. Մարիամ Եգիպտացու մէջ Հայոց խոստովանահայր Չաքարիայի փոխարէն, «որ ծերացել է»:⁸⁴

Չաքարիա Աղամի խնդրագրերը:

Վերոգրեալից, անկասկած, հետեւում է, որ Չաքարիան անընդհատ ջանում էր միջոցներ գտնել՝ ապրելու եւ թոշակ ստանալու համար իբրեւ խոստովանահայր եւ ամենեւին չենք բացառում, որ դա էլ հիմնականում պատճառ եւ նիւթ է դարձել իր հասցէին եղած ամբաստանութիւնների համար: Վերեւում արդէն տեսանք վկայութիւններ, երբ Չաքարիան Հալէպից Հռոմ գալով բազմիցս դրամական նպաստ ստանալու համար դիմեց Հաւատասփիւռ ժողովին. լինի դա Հայաստան ու Հալէպ կատարած միսիոներութեան փոխարէն, կամ որպէս Գալանոսի տպագրելիք գրքերի գրաքննիչ, կամ իբր Հաւատասփիւռ ժողովին հասցէագրուած նամակների թարգման, կամ էլ խոստովանահօր պաշտօնն զբացեղնելիս: Չաքարիայի ստացած նպաստները կայուն ու հաստատուն թոշակներ չէին, այլ ժամանակաւոր, որոնց ժամկէտները սահմանուած էին Հաւատասփիւռ ժողովի կողմից: Դա էր հիմնական պատճառը, որ դրամական նպաստի կարօտ

81 Իմա Հաւատասփիւռի ժողովի անդամ, կարդիւնալ Վիրքիմի Օրսինի (1615-1676):

82 Տե՛ս Acta, vol. 38, f. 481, n. 1:

83 Տե՛ս SOCG, vol. 451, ff. 24r-25v: Գրութիւնը անթուական է եւ գեկուցուել է 1674 թ. դեկտեմբեր 18-ի միսիոն (տե՛ս Acta, vol. 44, f. 369, n. 11):

84 Տե՛ս Acta, vol. 47, f. 213, n. 16:

անձը անընդհատ վերանորոգում ու կրկնում էր խնդրագրերը, ջանալով ի ցոյց դնել իր անձն ու անձնական արժանիքները, երբեմն չափազանցելով, երբեմն Հալատասփիւռ ժողովին հաճելի բանաձևեր գործածելով, որը նման շրջանակի մէջ գտնուողի համար, կարելի է ասել, ընտանի գործելակերպի էր վերածուել: Այս հայեացքով դիտուած՝ ունենք Չաքարիայի խնդրագրերի մի շարք, որ ստորեւ կը թուարկենք, ամբողջացնելու համար նրա կենսագրական մեզ յայտնի տուեալները:

Ա. 1661 թուականի հոկտեմբեր 3-ին ներկայացնելով իրեն, պատմում է որ ս. հալատքի (իմա՝ կաթողիկէութեան) համար լքել է հայրենիքը՝ Պարսկաստանը եւ Հռոմ է եկել, 28 տարի մնացել է անհալատներին ու հերձուածողներին մէջ, 14 տարի էլ Հռոմ՝ իբր խոստովանահայր եւ հայ տպագրութեան սրբագրիչ, որի դիմաց ստացել է ամսական միայն երեք սկուդ: Նամակով խնդրում է իր մատուցած ծառայութիւնների մասին մի վկայական՝ նորին սրբութեանը ներկայացնելու համար:⁸⁵

Բ. 1663 թ. յունուարի 23-ի Հալատասփիւռ ժողովի նիստում ներկայացւում է Չաքարիա Աղամի խնդրագրերը⁸⁶, որի համառօտութիւնը եւ արձանագրութիւնը կազմել է Հալատասփիւռ ժողովի քարտուղարը: Դրանից երեւում է, որ Չաքարիա Աղամը իրեն ներկայացնելով հալատքի մէջ, պատմում է իբր թողնելով հարստութիւն եւ պատիւ, եօթը տարի առանց դրամական օգնութեան ծառայել է Պօղոս Փրոմալլուն, 14 տարի իբր միսիոներ շրջել է Հայաստանում, ստանալով միայն 150 սկուդ, ապա կանչուել է Հռոմ իբր հայկական տպագրութիւնների գրաքննիչ, ստանալով ամսական երեք սկուդ: Հալատքի տարածումից յոգնած, արդէն ծերութեան

դուռը հասած, խնդրում է մինչեւ գարունը իրեն չզրկել դրամական փոքրիկ օգնութիւնից, մանաւանդ որ զբաղուած է լատիներէն-իտալերէն-հայերէն բառարանի պատրաստմամբ:

Չաքարիայի խնդրագրերը ներկայացնելուց յետոյ, քարտուղարը տալով նախնական ծանօթութիւններ, տեղեկացնում է, թէ Չաքարիային ամսական երեք սկուդ տրուեց, երբ նա սկսեց օգնել Գալանոսի գործի տպագրութեանը, մինչդեռ իրականում Գալանոսն ինքն էր իր գործը առաջ տանում: Չաքարիայի վճարումը շարունակուեց այն յոյսով, որ իբրեւ թարգման օգտակար լինէր Հալատասփիւռի ժողովին, սակայն կարեւոր թարգմանութիւնները դարձեալ անում էր Գալանոսը, որովհետեւ օժտուած էր աւելի իմացականութեամբ: Չաքարիան կարող էր օգտակար լինել Հռոմում հայոց հալատքի վերաբերեալ ու սակայն, կարող լինելով հանդերձ, ոչինչ չի անում:

Այս տեղեկութիւնների հիման վրայ ժողովականները որոշում են Չաքարիայի ամսականը շարունակել վճարել մինչեւ նոյն տարուայ մարտ ամսի վերջը:⁸⁷

Գ. Մնալով առանց թոշակի ու զուրկ ապրուստի միջոցներից՝ Չաքարիան 1663 թ. յուլիս 3-ին նոր խնդրագրով Հալատասփիւռ ժողովին յիշեցնում է թէ 28 տարի աշխատել է առաքելութեան մէջ, իսկ նոյն տարուայ Զատիկից սկսած դադարեցուել է իրեն երեք սկուդ ամսականի վճարումը ու ներկայումս խեղճ վիճակում է: Ստիպուած մտածում է հայրենիք վերադառնալու մասին, ուր ունեցած հերձուածող ազգականներից միայն հալածանքներ է սպասում: Հալատասփիւռ ժողովից խնդրում է իրեն մի նոր առաքելութիւն տայ, կամ ճանապարհածախս՝ հայրենիք վերադառնալու համար: Մինչեւ հիմնա-

85 Տե՛ս SOCG, vol. 223, f. 87rv:

86 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 223, f. 145rv:

87 Տե՛ս Acta, vol. 32, f. 9, n. 13:

կան որոշման ընդունումը խնդրում է դրամական որոշ նպաստ⁸⁸: Խնդրագիրը զեկուցուել է 1663 թ. յուլիս 3-ի նիստին եւ ոչինչ չի որոշուել⁸⁹ (պատկեր 3):

Դ. 1668 թ. մայիսի 28-ի Հաւատասփիւռ ժողովի նիստին ներկայացւում է Ջաքարիայի խնդրագիրը, ուր վերջինս ներկայացնում է այն տանջանքները, որ կրել է հայերէն գրքերի (!) տպագրութեան համար եւ թէ հարիւր հոգի կաթողիկէ է դարձրել, այժմ ծերացած լինելով դրամական օգնութիւն է խնդրում հայրենիք վերադառնալու համար: Հաւատասփիւռ ժողովի արձանագրութիւնը շարունակում է, որ համաձայն քարտուղարութեան ունեցած տեղեկութիւնների, Ջաքարիան որեւէ կերպ չի նպաստում կաթողիկէ վարդապետութեան տարածմանը, մի բան որ կարող էր անել Հռոմի համար, չնայած խօսում է իր ունեցած զանազան յատկութիւնների մասին, որի հետեւանքով էլ Հաւատասփիւռ ժողովը դադարեցրել է Ջաքարիայի նպաստը: Այս նիստի որոշումը լինում է «Ոչինչ», որ նշանակում է ոչնչով չնպաստել Ջաքարիային:⁹⁰

Ե. 1672 թ. մարտի 14-ին Ջաքարիան ներկայացնում է մի նոր խնդրագիր, գրելով որ 55 տարեկան է եւ 30 տարի առաջ դարձել է կաթողիկէ հաւատքին, հրաժարուելով իր աղանդից («setta»): Արեւելքում իր առաքելութեան տարիներին 70 հոգի դարձրել է կաթողիկէ եւ արեւելքից վերադառնալով ծառայել է Հաւատասփիւռ ժողովին ամսական երեք սկուդով, որ արդէն եօթ տարի է դադարեցրել է իրեն ամէն մի օգնութիւն: Խնդրում է մի նոր պաշտօն, մանաւանդ որ պատրաստում է լատիներէն-հայերէն-իտալերէն մի բառարան, որ օգտակար պիտի լինի թէ՛ Ուրբանեան վարժարանի աշակերտներին եւ թէ՛

միսիոներներին:⁹¹ Ժողովական արձանագրութեան մէջ կայ մի նախնական ծանօթութիւն. «Քարտուղարն ասում է որ 1663-ից դադարեցրինք ամսական թոշակի վճարումը, որովհետեւ գրքերի սրբագրութեան առումով որեւէ ծառայութիւն Հաւատասփիւռ ժողովին չի անում. այլ իր պնդումով շատ հայեր մնում են իրենց սխալի մէջ»:⁹²

Զ. Հաւատասփիւռ ժողովի 1672 թ. դեկտեմբերի 19-ի ժողովում նորից ներկայացւում է Ջաքարիայի նոր խնդրագիրը, որին եւս տրւում է ժխտական պատասխան:⁹³

Է. 1675 թ. յունիսին Ջաքարիան ներկայացնում է մի նոր խնդրագիր, յիշեցնելով իր արժանիքները, յատկապէս Արեւելքում իր կրած նեղութիւնները, եւ այդ մասին իր ունեցած վկայականները վեղարաւորներին եւ Յիսուսեաններին⁹⁴: Ամենայն հաւանականութեամբ, այս խնդրագիրը նոյնիսկ ժողովի քննութեանը չի ներկայացուել:

Եթէ ամփոփենք, ապա պարզ է, որ Ջաքարիան Հռոմում մնացել էր անտէր, անպաշտպան, գուրկ ապրուստի միջոցներից, քանի որ տարակոյսներ կային իր հաւատքի ու գործելակերպի մասին:

Ջաքարիա Աղամը Մարտելում:

1678-1686 թթ. Ջաքարիան Մարտելում էր, ուր մեծ դժուարութեամբ գործում էր հայկական տպարան Թոմաս Հայրապետի հսկողութեան տակ: Թոմաս Հայրապետը որպէս Հռոմի կողմից ուղարկուած գրաքննիչ, միացած տեղի եկեղեցական եւ քաղաքական իշխանութիւններին, իրեն

88 Տե՛ս SOCG, vol. 223, f. 166rv:

89 Տե՛ս Acta, vol. 32, f. 158, n. 15:

90 Տե՛ս Acta, vol. 37, f. 88, n. 23:

91 Այս խնդրագրից մեզ յայտնի է երկու օրինակ՝ SOCG, vol. 434, f. 181 եւ SC Armeni, vol. 2, f. 1:

92 Տե՛ս Acta, vol. 42, f. 70, n. 42:

93 Տե՛ս Acta, vol. 32, f. 306, n. 6:

94 Տե՛ս SC Armeni, vol. 2, f. 383:

զգուժմ էր որպէս դրուժեան լիակատար տէր: Սակայն երբ Ջաքարիան Հռոմից հասաւ Մարսել իր գործը կրկնապատիկ դժուարացած զգաց: Հայկական տպարանի կացութիւնը պարզաբանելով Հաւատասփիւռի ժողովի նախագահ կարդինալին 1679 թ. փետրուար 27-ին, Թոմասը գրում է, թէ ինքն անձամբ Ջաքարիա վարդապետ Աղամին պարզաբանել է Սողոմոնի բոլոր խորամանկութիւնները, խնդրելով նրա հետ բարեկամութիւն չանել, այլ միասնաբար աշխատեն ի նպաստ կաթողիկէ եկեղեցու: Ջաքարիան խոստանում է Թոմասին գործակցել իրեն հետ, սակայն հաւատարիմ չմնալով իր խօսքին, յարում է Սողոմոնին, որն էլ գնալով քաղաքի աթոռակալ եպիսկոպոսի մօտ գովաբանում է Ջաքարիայի անձը, հաւատքի անարատութիւնը, պատմելով թէ նա քսանհինգ տարի ծառայել է Հռոմի ս. Աթոռին ու խնդրում է Թոմասի փոխարէն Ջաքարիային նշանակել թարգման: Մի քանի օր յետոյ, Սողոմոնը առնելով Ջաքարիայի ունեցած բոլոր յանձնարարականները, որոնց թւում նաեւ Հռոմի կարդինալներից մեկի նամակը, տանում է սենատ, գովում է Ջաքարիայի անձը, խնդրելով, որ նա սահմանուի իբրեւ թարգման, սակայն սենատը չի ընդառաջում Սողոմոնի այդ ցանկութեանը:

Թոմաս Հայրապետը անդրադառնում է նաեւ, որ Ջաքարիայի Մարսել հասնելուց յետոյ շատ քիչ ազգակիցներ են իրեն դիմում խոստովանութեան համար, քանի որ Ջաքարիան պղտորել էր ազգակիցների միտքը:

Ջաքարիան, անշուշտ, դառնացած էր իր հանդէպ Հռոմի բռնած դիրքից, Սողոմոնի ներկայութեամբ Թոմաս Հայրապետին ասում է, թէ Հռոմի Ս. Աթոռը չի կարող արգելք հանդիսանալ Սողոմոնի գործունէութեանը, որովհետեւ Սողոմոնը եթէ Մարսելում արգելքների հանդիպի, ապա

կարող է տեղափոխուել Զմիւռնիա եւ այնտեղ շարունակել գործը:

Իսկ «անօրէն Ջաքարիան իր ունեցած յանձնարարական գրերով մտածում է կասեցնել իմ գործունէութիւնը,- շարունակում է գրել Թոմաս Հայրապետը,- եւ միշտ գիշերում է այն տանը, ուր տպարանն է գտնւում, որպէսզի ազատօրէն տպագրել տայ ինչ ուզում է»:⁹⁵

Թոմաս Հայրապետի այս նամակը (1679, փետրուար 27 թուակիր) Հռոմում յանձնուել է Բարսեղ Հոլովին, որպէսզի Հաւատասփիւռ ժողովին ներկայացնի հարցի էութիւնը: Բարսեղն, իր սովորութեան համաձայն, պատրաստում է մի մենագրութիւն, տալով յարակից ծանօթութիւններ, վերջաւորութեանը տալով այս եզրակացութիւնը. «Ջաքարիա Աղամը գտնւում է Մարսելում եւ միացած Սողոմոնին չարիք է գործում, ճիշտ այնպէս ինչպէս անում էր այստեղ Հռոմում. պէտք է վտարել քաղաքից»:⁹⁶

Բարսեղ Բարսեղեանի ձեռքով գրուած մեկ այլ անթուական նամակ, հասցեագրուած Հաւատասփիւռի կարդինալներին, ամենայն հաւանականութեամբ, եւս գրուած է այս օրերին: Ամփոփելով Մարսելի տպարանի հարցերը, որին առընչում էր նաեւ Ջաքարիան, հաղորդում է հետեւեալը. «Սողոմոնից բացի կայ նաեւ Ջաքարիա Աղամը, որ այստեղ Հռոմում Սանտ օֆիսից բանտարկուեց եւ ազատուելով հրաման ստացաւ գնալու ուր կամենայ, բացի Լիվոնոյից եւ Վենետիկից: Այժմ Մարսելում է, Սողոմոնին օգնական... Չանքեր գործադրէք իրեն այնտեղից հեռացնելու»:⁹⁷

Բարսեղի գրութիւնն ու Թոմաս Հայրապետի վերոյիշեալ նամակը գեկուցւում

95 Տե՛ս SOCG, vol. 476, ff. 75r-77v:

96 Տե՛ս SOCG, vol. 476, ff. 62r-65v:

97 Տե՛ս SC Armeni, vol. 5, ff. 614+617:

են Հաւատաստիւն ժողովի 1679 թ. նոյեմբերի 20-ի նիստում եւ որոշւում է լուծումներ գտնել տպարանի հարցով:⁹⁸

Սողոմոն Լեւոնեանի Պոլիս մեկնելով, Մարսելի տպարանը մնում է անգործ, իսկ Զաքարիա Աղամը անցնում է Փարիզ: Սողոմոնը Պոլիսից Փարիզ դառնալով ու միանալով Յովհաննէս եպիսկոպոս Թուրքունջուն, դիմում են Թագաւորին, հակառակ Թոմաս Հայրապետի, իբր Մարսելի հայկական տպարանի խանգարիչ, որ ունէր Թագաւորական մենաշնորհ, եւ երկրորդ՝ նեղում է Մարսելի հայերին, չուզե՞նալով լսել նրանց խորհրդական խոստովանանքը: Սողոմոնի բողոքին ձայնակցում են նաեւ այլ ազգակիցներ, որոնց ցանկութեանն ընդառաջ հրամայւում է, որ Զաքարիա վարդապետը Փարիզից փոխադրուի Մարսել՝ իբրեւ հայոց խոստովանահայր, իսկ Թոմաս Հայրապետը խոստովանութիւն ընդունի միայն կաթողիկէ դաւանութիւն ընդունած հայերին: Երբ Լուդովիկոս ԺԴ. արքայի կողմից սահմանւում է յատուկ յանձնախումբ այս հարցը քննելու, Թոմաս Հայրապետը քննիչին է ներկայացնում խնդրագիրը⁹⁹: Քննիչը սահմանում է որ տպարանի հարցը պէտք է լուծի քաղաքի եպիսկոպոսը: Վերջինիս բացակայութեամբ, եպիսկոպոսի Աթոռակալը սահմանում է, որ տպարանի գրաքննութեան հարցերով զբաղուեն Թոմաս Հայրապետը Զաքարիայի հետ միասին: Թոմասը հրաժարւում է աջակցելուց, պատճառաբանելով, թէ Զաքարիա վարդապետը Հոռմի աչքում հաւատարիմ անձ չէ եւ տպարանում գիշերելով համագործակցում է տպողների հետ, ուստի պահանջում է մեկ ուրիշ կաթողիկէ քահանայ տպարանի գրաքննութեան համար:

Այս մանրամասնութիւնները հաղորդում է Թոմաս Հայրապետը իր 1683 թ. նոյեմբերի 11-ի նամակում, ուղղուած Հաւատաստիւն ժողովի քարտուղարին, տեղեկացնելով նաեւ Սողոմոնի մահուան լուրը եւ Զաքարիա վարդապետի կողմից ոչ մեկին հաւատոյ խոստովանութիւն անել տալը:¹⁰⁰

Զաքարիա վարդապետ Աղամն, անկասկած, գործակցում էր տպարանի հետ, անկախ Թոմաս Հայրապետի կամքից:

1683 թ. յուլիսի 1 թուագրուող շապիկն է կրում Մարսելում հրատարակուած «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց. որ է Աղուէսագիրք», աշխատութիւնը, որի համառօտ յիշատակարանը (էջ 288) յայտնում է. «Սրբագրութեամբ եւ շարաբարդութեամբ Մատթէոսի Վանանդեցոյ»: Յաջորդ էջից (էջ 289) սկսւում է «Համառօտ վիպասանութիւն» կոչուող ժամանակագրութիւնը, որն աւարտւում է 320 էջում¹⁰¹: Վերնագրից անմիջապէս յետոյ հետեւում է. «Թարգմանեցեալ ի Զա-

100 Տե՛ս SC Armeni, vol. 3, ff. 383+387:

101 Դեռ 1961 թ. հայագետ Յակոբ Անասեանը հիմնադր կատարածն էր յայտնել, որ Վազգէն Յակոբեանի կողմից այս ժամանակագրութիւնը հրատարակուել էր «Անանուս Լիվոնացոյ» անունով տակ (տե՛ս Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ., հտ. I, կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, 1951, էջ 262-280), միաժամանակ ցուց տալով նրա 1683 թ. հրատարակութիւնը: Յ. Անասեանը միաժամանակ այն համեմատելով Երեւանի մատենադարանում պահպանուած եւ Վ. Յակոբեանի հրատարակած ձեռագրերի հետ, գտնում է որ առկայ 2 ձեռագրերն արտագրուել են 1683 թ. տպագրից (տե՛ս Յակոբ Անասեան, XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում. էջ 179-180, ծանօթ. 1): Փաստօրէն, գրիչն, արտագրելիս ինչ ինչ պատճառներով հետագրել է ժամանակագրութեան բուն հեղինակի՝ Զաքարիայի անունը, որ տպագրի շապիկին է, ինչպէս նաեւ տպագիր «ժամանակագրութիւնից» թուագրման մի կարեւորագոյն հատուած (գրքի տիտղոսաթերթից) տեղափոխել է տեքստ, որ է «թիւ մարդեղութեան Փրկչին 1683» (հմմտ. «Մանր ժամանակագրութիւններ», էջ 272, «Համառօտ վիպասանութիւն», էջ 306):

98 Տե՛ս Acta, vol. 49, ff. 205-207, n. 19:

99 Խնդրագրի մի օրինակ Թոմասն ուղարկում է Հոռմ, տե՛ս SC Armeni, vol. 3, f. 386:

քարիայ Միւնեցւոյ բանասիրի՝ ի լատին բարբառոյ ի հայս եւ ի Հայոց եւս արտաքարչեալ. առ ի պէտս հայկազունեաց ճշմարտասիրաց» (պատկեր 4):

Այնուհետեւ Չաքարիա Աղամի մասին միայն ակնարկներ կարելի է գտնել Թոմաս Հայրապետի նամակներում: 1684 թ. օգոստոս 17-ին գրում է, թէ «Յովհաննէս եպիսկոպոսը [Թուրքունջին] վեղարաւորի զգեստով անցաւ քաղաքիցս եւ ամբողջ գաւառում դրամ էր հաւաքում: Վերադարձին այստեղ սկսեց քարոզել կաթողիկէ վարդապետութեան դէմ, ասելով, թէ՛ ով որ նզովում է պապին՝ թող հետս մօրուքն ածիլէ...: Միացաւ Չաքարիա վարդապետին եւ մի իսպանացի կնոջ, ողորմութիւն էր հաւաքում Պորտուգալիա գնալու համար»¹⁰²:

Յովհաննէս եպիսկոպոս Թուրքունջուհետ, կամ նրանից յետոյ, Չաքարիան Մարսելից մեկնում է Պորտուգալիա ու 1686 թ. առաջին ամիսներին դառնում Մարսել: Այս լուրը Թոմաս վարդապետը հաղորդում է Հաւատասփիւռ ժողովի քարտուղարին 1686 թ. յունիսի 5-ի նամակով. «Արդէն իսկ սկսել են ժամագրքի տպագրութիւնը, մի քանի ամիս առաջ Չաքարիա վարդապետ Աղամը վերադարձաւ Պորտուգալիայից, միացաւ տպագրիչին, ասելով թէ իւրաքանչիւր էջ պիտի իրենցոյց տան»¹⁰³:

Չմիւռնիայի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Քէօլեանն էլ է միջամտում Մարսելի տպարանի հարցերում, հակառակ Թոմաս Հայրապետի եւ նրա կատարած սրբագրութիւններին: Յովսէփ արքեպիսկոպոսը Լիվոռնոյից 1686 թ. սեպտեմբերի 1-ին գրում է Մարսելի ազգակիցների Մըշաղբիւրցի պարոն Գրիգորին, զգուշացնելով որեւէ դրամական օգնութիւն կամ

նպաստ չցուցաբերել ժամագրքի տպագրութեանը, որովհետեւ Եղիազար կաթողիկոսի հրահանգով, այդ սրբագրութիւններով ոչ մեկը չի գնելու այդ գիրքը: Յովսէփ արքեպիսկոպոսը գրում է. «Թէ՛ որ պատճառաւն կամիցիս իմանալ, հասարակաց եւ Չաքարիայ վարդապետի թղթովն իմասցիս, որ մի ըստ միոջէ գրեալ եմ եւ ծանուցեալ»¹⁰⁴:

Թոմաս Հայրապետը պայքարելով Մարսելի հայրենակիցներից Շաֆրազի դէմ, նրա հաւատքի ու ներքին համոզմունքների մասին վատ տեղեկութիւններ հաղորդելով, իր 1686 թ. սեպտեմբերի 16-ի նամակն ուղղում է արքունիք, թագաւորի խոստովանահօրը՝ P. de la Chaise-ին¹⁰⁵ որի մեկ օրինակը¹⁰⁶ ուղարկում է Հաւատասփիւռի ժողովին ու առանձին, 1686 թ. սեպտեմբեր 25 թուակիր նամակով, բացատրութիւններ տալով, ջանալով միշտ աւելի ընդգծել Չաքարիա վարդապետի խոտոր ընթացքը, անուղղակի կերպով բարձրացնելով իր դերը. «Սաֆրազը ցանկացաւ ինձ խոստովանել ու հաղորդուել եւ երբ իրենից պահանջեցի հաւատոյ դաւանանք, մերժեց, ասելով, թէ ինքը գնացել ու թարգմանով խոստովանել է եւ հաղորդուել: Կարծում եմ որ այս գործելակերպը բխում է Չաքարիա վարդապետի խօսքերից, որ արդէն չորս ամիս է իսպանիայից եկել է այստեղ. հաւանաբար ինքն է լսել Շաֆրազի խոստովանութիւնը: Չաքարիա վարդապետը Փարիզում եղած ժամանակ էլ լսել էր մի հայի խոստովանութիւն, առանց պահանջելու հաւատքի դաւանութիւն: Նոյն հայը այստեղ գալով ցանկացաւ ինձ խոստովանել եւ երբ իրեն մերժեցի, պատասխանեց, թէ Չաքարիա վարդապետը իրեն տուել է ս. խորհուրդները, ա-

104 Տե՛ս SC Armeni, vol. 4, f. 202:

105 Իմա՛ Լուդովիկոս ԺԴ-ի խոստովանահայր, յիսուսեան Pèrre de la Chaise (1624-1709):

106 Տե՛ս SC Armeni, vol. 3, ff. 455rv+458rv:

102 Տե՛ս SC Armeni, vol. 3, ff. 403r-404v:

103 Տե՛ս SC Armeni, vol. 3, f. 444rv:

ուանց հաւատոյ դաւանանք պահանջելու: Ջաքարիա վարդապետն այն անձն է, որ ս. Ժողովդ արգելեց գնալ Վենետիկ եւ Լիվոռնո, որպեսզի չխռովի հայ ժողովրդին: Այստեղ սրբաքննութիւն գոյութիւն չունենալով դիմեցի քաղաքի եպիսկոպոսին, տեղեկացնելով Շաֆրազի ու Ջաքարիա վարդապետի արարքները, սակայն ոչ մի լուծում չտուեց»¹⁰⁷:

Ջաքարիայի վերադարձն Հոռոմ ու մահը:

Ջաքարիա վարդապետն, անկասկած ցանկանալով աւարտել իր թափառական կեանքն ու որեւէ խաղաղ անկիւն քաշուել կեանքի վերջին տարիներն անցնելու համար: Իսպանիա գնալը, ապա կրկին Մարսել դառնալը եւ դեռ մտածում էր Հայրենիք վերադառնալ, երբ Թոմաս Հայրապետը, մի կողմ թողնելով բոլոր հակառակութիւնները, խորհուրդ է տալիս Հոռոմ վերադառնալ:

Ունենք Թոմաս Հայրապետի մի անթուական լատիներէն նամակը, գրուած, Հաւատասփիւռ ժողովի քարտուղարին, որին յանձնարարում է Ջաքարիա վարդապետը, «որ լաւ ծանօթ է ձեզ, քանի որ անցեալում երեսուն տարի ծառայել է հոռոմէական եկեղեցուն: Վեց ամիս Իսպանիա մնալուց յետոյ վերադարձաւ Մարսել, միշտ Հայաստան գնալու մտադրութեամբ: Երբ տեսայ իրեն, [լսելով] իր մտահոգութիւններն ու կասկածելի վիճակը, որ Հայաստանում կարող է հակառակութիւններ կրել հերետիկոսներից, ծեր լինելով՝ խորհուրդ տուեցի որ Հոռոմ գնայ իր հոգու բարիքի համար: Յանձնում եմ իրեն ձեր խնամքին»¹⁰⁸:

Այս նամակը, հաւանաբար, գրուել է 1687 թ., եւ Ջաքարիան Հոռոմ վերադառնալով արդէն տեղաւորուել էր Ս. Մարիամ

Եգիպտացու եկեղեցու հայոց հիւրանոցը, ուր եւ վախճանուել է 1688 թ. օգոստոս 15-ին, նոյն հիւրանոցին կտակելով իր ունեցուածքը եւ թաղուել է նոյն եկեղեցում: Հայերէն եւ լատիներէն գրութիւններով¹⁰⁹ տապանագիրը կարծես ամփոփում է Ջաքարիայի կենսագործունէութեան հիմնական փուլերը.

D.O.M

ZACCHARIÆ FILIO AGAM | DE PROVINCIA SISIAN. EX OPPIDO. PINUNIS |

109 «Աղաւաղ հայ լեզուա» գրուած տապանագրի առաջին հրատարակութիւնը տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Սիսական. Տեղագրութիւն Սիսեաց աշխարհի, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 216: Հ. Ղետնդ Ալիշանը այն հրատարակելիս իր ձեռքի տակ ունեցել է ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցու հայերէն վիմագրական ցուցի երկու համահաւասար ձեռագրեր, որոնք պահում են ս. Ղազարի ձեռագրատանը (արձանագրութիւնները առաջինը 1772 թ. խնամքով արտագրել էր Մխիթարեան վարդապետ Ստեփաննոս Ասիկեանը (1737-1807),- տե՛ս Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. 2721: Հմմտ. Գաեւ Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. 2746, թ. 12ա (Հայր Անանիա Ծելալեանի (1790-1867) կողմից կազմուած է արձանագրութիւնների դիւանը: Այս գործը Ծելալեանի կողմից կատարեց 1851 թ. մարտի 1-21-ը, Հ. Ղ. Ալիշանի խնդրանքով, միաժամանակ տապանագրերին կցել է Գաեւ եկեղեցու, Հայոց հիւրանոցի ու պարտեզի ամենայն բարեխղճութեամբ արուած յատակագիծը: Այս քարտեզը բացառիկ կարեւորութիւն ունի, քանի որ հետագայում հայերէն արձանագրութիւնները հանուեցին ս. Մարիամ Եգիպտացուց եւ տեղափոխուեցին ս. Վլաս եւ առանց քարտեզի անհնարին կը լինէր նրանց տեղորոշումը: Տեղաշարժման ժամանակ արձանագրութիւնների մի մասը կոտորուել է վնասուել է: Այդպիսի բախտի է արժանացել Գաեւ Ջաքարիայի տապանաքարը, բայց բարեբախտաբար կոտորուած ու միմեանց ամրացուած մասերը չեն խաթարել բուն արձանագրութիւնը եւ թոյլ են տալիս տեսնելու նախորդ հրատարակութիւնների ճշգրտութիւնը: Անկասկած արձանագրութեան բուն փորագրիչը հայերէն չի իմացել: Դրա վկայութիւնն է Գ-Դ, Յ-Յ, Տ-Յ, Զ-Յ տառերի շփոթը, Ա, Ռ, Մ, տառերում մասնիկների բացակայութիւնը եւն (ստորեւ դա արտացոլել ենք թաւ տառատեսակով): Ջաքարիա Աղամի տապանագրի որակեալ լուսանկարի համար մեր շնորհակալութիւնն ենք յայտնում Մխիթարեան միաբան Հ. Վահան Վրդ. Օհանեանին:

107 Տե՛ս SC Armeni, vol. 3, f. 456rv:
108 Տե՛ս SC Armeni, vol. 5, f. 519:

IN ARMENIA MAIORI. | VIRO. LINGUA-
 RUM ERUDITIONI VERSATO. | MIS-
 SIONARIO APOSTOLICO AD ARMENOS |
 HUIUS ECCLESIAE. ET NATIONIS
 CONFESSARIO. | LIBRORUMQUE AR-
 MENORUM. IN COLLEGIO DE PROPAGA-
 NDA FIDE CORRECTORI | HAEC.
 ECCLESIA. EX. EAMINIO HÆRES. |
 POSUIT ANNO D. MDCLXXXVIII.




է


ՅԻՇԱՏԱԿ ԶԱՔԱՐԵԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ [ՈՐ]Կ[Ո]Յ
 ԱՂԱՄԻ Ի ԳԱԻ[Ա]ՌԷՆ ՍԻ|ՍԻԱՆԱՅ, Ի ԳԵՂՁԷ
 ԲՆՈ[Ի]ՆԵԱՅ ԱՌՆ Զ[Ա]Ն[Ա]Զ[Ա]ՆԻԻ
 ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ | ՀՄՏԱՅԵԼՈՅ,
 ԱՌԱՔԵԼԱԿԱՆԻ ԱՌ ՀԱՅՍ ՔԱՐ[Ո]ԶՈՂԻՆ
 ԱՅՍՄԻԿ ԵԿԵՂԵ|ՑԻՈՋ ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ ՀԱՅՈՅ
 ԱԶԳԻ. ԳՐԵԱՆՅ ՀԱՅԿԱԿԱՆԱՅ | Ի ՏՊԱՐԱՆԻ
 ՍՐԲՈՅ ԺՈՂՈՎՈՅՆ ՍՐԲԱԳՐՈՂԷ. ՈՐ ԼՅԵԱԼ
 ԱԻՌԻԲԲԲ | ՀԷ ԱՄԱՅ ՎՃԱՐԵԱՅ ԶԿԵԱՆՍ ԻՐ
 ԵՒ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՏԷՐ ԼԻ ԱՐԳԵԱՄԲ | ԵՒ
 ԱՇԽԱՏԱՆՕՔ ԹՈՂԼՈՎ ԶԻՆԶՍ ԵՒ
 ԶՄՏԱՅ[Ո]ԻԱԾՍ ԻՐԻՍ | ԱՅՍՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի
 ԺԵ ՕԳՈՍՏՈՍԻ | ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ՌՈԶԸ ԵՒ Ի
 ՀԱՅՈՅ / ՌՃԼԷ:

*Սրանով սպառուում են մեր ունեցած
 տեղեկութիւնները Արեւելքից պատանի
 Հասակում Արեւմուտք Հանգրուանած,
 ամբողջ կեանքը Հռոմի կաթողիկէ եկեղե-
 ցուն եւ նրա դաւանանքի քարոզչութեանը
 նուիրած, Կղեմէս Գալանոսի աշակերտ-
 ներից Զաքարիա Աղամի կեանքի եւ գոր-
 ծունէութեան մասին:*


ՊԱՏԿԵՐՆԵՐ



Պատկեր 1. 1652 թ. մայիսին Հալեպում, լատին վանքերի երեք մեծատրոսների կողմից Չաքարիա Աղամին տրուած վկայականը



Պատկեր 2. Չաքարիա Աղամի յիշատակագրութիւնը Ջահկեցիների Ծառոցում



Պատկեր 3. Զարարիա Աղամի խնդրագրերից



Պատկեր 4. «Գիրգ աշխարհաց եւ առասպելաբանութեանց. որ է Աղուէսագիրգ»: